



Ստորաբնութագր / Վարչակազմ, 20 մարտի, 2018 թ.

CDL(2018)004*

Վենետիկի հանձնաժողովի թիվ 909/2017
Եզրակացություն
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի թիվ FORB-ARM/319/2018
Եզրակացություն

Բնօրինակն անգլերեն
Ոչ սլաշ տոնակն թարգմանություն

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)**

**ԵԱՀԿ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏ ԱՏ ՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ)**

Հ Ա Յ Ա Ս Ա Ն

**«ԽՂՃԻ ԱԶՍՏ ՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» Հ Ա Յ Ա Ս Ա ՆԻ
Հ ԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Հ Ա Յ Ա Ս Ա ՆԻ Հ ԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հ Ա Մ Ս Ե Ղ Ե Ջ Ր Ա Կ Ս Յ ՈՒԹՅՈՒՆ

**ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՎԵՆԵՏԻԿԻ Հ Ա Ն Ձ Ն Ա Ջ ՈՂ Ո Վ Ի Կ Ո Ղ Մ Ի Յ 114-ՐԴ
Լ Ի Ա Գ ՈՒ Մ Ա Ր Ն Ի Ս Տ ՈՒ Մ (ՎԵՆԵՏԻԿԻ, 16-17 ՄԱՐՏ, 2018 Թ.)**

**Հ ի մ ն վ ա ծ է հ ե տ ն յ ա լ փ ո թ ը ա զ ե տ ն ե թ ի
մ ե կ ն ա ք ա ն ու թ յ ու ն ն ե թ ի վ թ ա .**

- Տ կ ն . Յ ա ս ն ա Օ Մ Ե Յ Ե Յ (ա ն դ ա մ , Խ ո թ ը ա թ ի ա)**
- Պ թ ն . Յ ա ն Ֆ Ե Լ Ա Յ Ր Մ (ա ն դ ա մ , Բ ե լ գ ի ա)**
- Պ թ ն . Բ ե ն Ֆ Ե Ր Մ Ո Յ Լ Ե Ն (ա ն դ ա մ , Ն ի դ ե ո լ ա ն դ ն ե թ)**
- Տ կ ն . Ջ ո թ լ ա Կ Ո Մ Բ Ա Ի Ա (Կ թ ո ն ի կ ա մ հ ա մ ո զ մ ու ն թ ի
ա զ ա ս ո ու թ յ ա ն փ ո թ ը ա զ ե տ ն ե թ ի Ե Ա Հ Կ / Շ Հ Մ Ի Գ - ի խ ո թ ի թ դ ա ս ո լ ա կ ա ն
հ ա ն ձ ն ա խ ա մ թ ի ա ն դ ա մ)**
- Տ կ ն . Է լ ի ա Թ Ո Մ Ա Ս (Ե Ա Հ Կ / Շ Հ Մ Ի Գ - ի փ ո թ ը ա զ ե տ)**

Բովանդակություն

- I. Ներածություն 3
- II. Համատեղ եզրակացություն շրջանակը 3
- III. Համառոտագիր 5
- IV. Վերլուծությունը և առաջարկությունները 8
 - A. Կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքին սույն վնաս
միջոցազույցին ստանդարտները և ԵԱՀԿ-ի շրջանակում ստանձնված
հանձնառությունները 8
 - B. Ազգային իրավունքները 8
 - C. Ընդհանուր մեկնաբանություններ 9
 - D. Օրենքի նախագծի շրջանակում կատարված «համոզմունքի»
ազատության հետ 10
 - E. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին 13
 - 1. Օրենքի նախագծին «Հայաստանի Հանրապետության և
Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու
հարաբերություններին մասին» Հայաստանի Հանրապետության 2007
թվականին ընդունված օրենքի փոխհարաբերությունները 13
 - 2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու
ստանձնահատուկ կարգավիճակը 15
 - F. Կրոնի (կամ համոզմունքի) ազատության իրավունքը կրոնական
կամ համոզմունքային չգրանցված խմբերի համար սպասելի էլ
երաշխիքները 16
 - G. Մեկնական կրոնի կամ համոզմունքի արտահայտման ազատության
սահմանափակումները 20
 - 1. Ըստ բովանդակության սահմանափակումները 20
 - 2. Արգելքի կոնկրետ հիմքերը 22
 - H. Կրոնական կազմակերպությունները 25
 - 1. Կրոնական կազմակերպության ստեղծումը (գրանցումը) 26
 - 2. Կրոնական կազմակերպություններին իրավունքներ
պարտավորությունները 32
 - 3. Կրոնական կազմակերպություններին հաշվետվական
պարտավորությունները 35
 - 4. Պետության կրոնական կազմակերպություններին
հարաբերությունները (հոդված 12) 36
 - 5. Կրոնական կազմակերպության կասեցումը եւ լուծարումը .. 36
 - 6. Անցումային դրոյթները եւ որպես կրոնական
կազմակերպություններ վերագրանցվելու պարտավորությունները 40
 - I. Կրոնական կազմակերպություններին գործունեության
վերահսկողությունները 40
 - J. Առաջարկություններ Օրենքի նախագծի պատրաստման եւ
ընդունման գործընթացի վերաբերյալ 41

I. Ներածություն

1. 2017 թվականի նոյեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար պրն. Դավիթ Հարությունյանը ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակին (հետագայում՝ «ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ») և Եվրոպայի խորհրդի Իրավունքի միջոցով՝ ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովին (հետագայում՝ «Վենետիկի հանձնաժողով») ուղարկեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (հետագայում՝ «Օրենքի նախագիծ», CDL-REF(2018)006) փորձաքննության ենթարկելու և մարդու իրավունքների միջազգային չափանիշներին և ԵԱՀԿ հանձնաժողովին ներկայացնելու գնահատելու մասին խնդրանքը:

2. Վենետիկի հանձնաժողովի կողմից որպես զեկուցողներ նշանակվեցին տկն. Յասնա Օմեյեցը (անդամ, Խորվաթիա), պրն. Յան Ֆելայրսը (անդամ, Բելգիա) և պրն. Բեն Ֆերմոյլենը (անդամ, Նիդեռլանդներ): ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի կողմից որպես իրավաբան-փորձագետներ նշանակվեցին տկն. Ջոիլա Կոմբալիան և տկն. Էլիս Թոմասը:

3. Վենետիկի հանձնաժողովի անունից՝ Տկն. Յասնա Օմեյեցից և պրն. Յան Ֆելայրսից, իսկ ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի անունից՝ տկն. Ջոիլա Կոմբալիայից կազմված պատվիրակությունը 2018 թվականի փետրվարի 6-7-ին այցելեցին Հայաստան՝ Երևան, որտեղ հանդիպումներ ունեցան պետական իրավասու մարմինների ներկայացուցիչներին, քաղաքական գործիչներին, կրոնական և համոզմունքային համայնքների ներկայացուցիչներին, հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) և այլ շահակիցների հետ: Մույն Համատեղ եզրակացություն մեջ հաշվի են առնված այցի ժամանակ ստացված տեղեկությունները: Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի պատվիրակության անդամներն իրենց երախտագիտությունն են հայտնում Հայաստանի իշխանությունների կողմից այցի ժամանակ ցուցաբերված շատ համազործակցային և կառուցողական դիրքորոշման համար:

4. Մույն Համատեղ եզրակացությունն ուսումնասիրվել է Հիմնարար իրավունքների ենթահանձնաժողովի կողմից 114-րդ լիազորմար նիստում (Վենետիկ, 16-17 մարտ, 2018 թ.):

II. Համատեղ եզրակացություն 2 րջանակը

5. 2017 թվականի հոկտեմբերի 16-ին ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ն Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի խնդրանքի հիման վրա արդեն իսկ հրապարակել էր Եզրակացություն Օրենքի նախագծի ավելի վաղ տարբերակի վերաբերյալ (հետագայում՝ «ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի 2017 թ. եզրակացություն»): 2009 և 2010 թվականներին ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովն արդեն իսկ փորձաքննության էին ենթարկել

¹ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացություն, FORB-ARM/311/2017 [AIC], 16 հոկտեմբերի, 2017 թ., <<http://www.legislationline.org/documents/id/21314>> (անգլերեն տարբերակը) և <<http://www.legislationline.org/documents/id/21378>> (հայերեն տարբերակը):

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախկին նախագիծը և երկու համատեղ եզրակացություններ էին ներկայացրել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների նախկին նախագծերի վերաբերյալ (հետայսու՝ «2009 թվականի համատեղ եզրակացություն») և «2010 թվականի համատեղ եզրակացություն»):² Այդ փոփոխությունների նախագծերը, սակայն, այդպես էլ չընդունվեցին: 2011 թվականին Հայաստանի իշխանությունները պատրաստել էին «Խղճի և կրոնի ազատության մասին» Հայաստանի Հանրապետության ամբողջովին նոր օրենքի նախագիծ, որը նույնպես փորձաքննության էր ենթարկվել ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից,³ սակայն ի վերջո նույնպես չէր ընդունվել:

6. Մույն եզրակացության շրջանակն ընդգրկում է միայն փորձաքննության համար ներկայացված Օրենքի նախագիծը, ինչպես նաև այդ նախագիծով փոփոխվող օրենսդրությունը: Այդ սահմանափակ մամբ հանդերձ՝ սույն եզրակացությունն Հայաստանում կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքը կարգավորող իրավական և ինստիտուցիոնալ ողջ դաշտի լիարժեք և համապարփակ փորձաքննություն չէ:

7. Համատեղ եզրակացության մեջ առաջ են քաշվում կարևորագույն խնդիրները, նշվում են մտահոգությունն պատճառող ոլորտները: Որպեսզի տեքստը հակիրճ լինի, այն ավելի շատ կենտրոնանում է ոչ թե Օրենքի նախագծի դրական կողմերի, այլ՝ այն ոլորտների վրա, որոնցում անհրաժեշտ են փոփոխություններ կամ բարելավումներ: Ստորև բերված առաջարկությունները հիմնված են մարդու իրավունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային ստանդարտների և պարտավորությունների, ԵԱՀԿ շրջանակում ստանձնած համապատասխան հանձնառությունների և հաջողված ներպետական փորձի օրինակների վրա: Եզրակացության մեջ նաև ըստ անհրաժեշտության հղումներ են արվում ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի և/կամ Վենետիկի հանձնաժողովի կողմից նախկին իրավաբանական

² Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ, Վենետիկի հանձնաժողով և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինություն, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ համատեղ եզրակացություն, CDL-AD(2009)036, 23 հունիս, 2009 թ., <<http://www.legislationline.org/documents/id/15602>> (հետայսու՝ «2009 թվականի համատեղ եզրակացություն»), և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ և «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ վերաբերյալ համատեղ միջանկյալ եզրակացություն, CDL-AD(2010)054 (հետայսու՝ «2010 թվականի համատեղ եզրակացություն»): <<http://www.legislationline.org/documents/id/16086>>

³ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ և Վենետիկի հանձնաժողով, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ և «Հայաստանի Հանրապետության և Հայաստանի պատմության Մուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ վերաբերյալ համատեղ եզրակացություն, CDL-AD(2011)028, (հետայսու՝ «2011 թվականի համատեղ եզրակացություն»), <<http://www.legislationline.org/documents/id/16663>>

փորձաքննություններին եզրակացություններում ներկայացված համապատասխան առաջարկություններին (տե՛ս վերը՝ 4-րդ կետ): Սույն Համատեղ եզրակացությունն հիմնված է Օրենքի նախագծի ոչ պաշտոնական անգերեն թարգմանության վրա, որը տրամադրել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը 2017 թվականի նոյեմբերի 28-ին: Հնարավոր են Օրենքի նախագծի թարգմանության ամբողջական ավտոմատիվացումը:

8. Հաշվի առնելով վերոգրյալը, ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը ցանկանում են հիշատակել, որ սույն Համատեղ եզրակացությունը, հնարավոր է, անդրադառնա Օրենքի նախագծի ոչ բոլոր դրույթներին, և որ սույն Համատեղ եզրակացությունը չի քննարկում Հայաստանում համապատասխան իրավական ակտերի կամ հարակից օրենսդրության վերաբերյալ լրացուցիչ գրավոր կամ բանավոր առաջարկություններին և մեկնաբանություններին ձևակերպումն ապագայում ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից:

III. Համառոտագիր

9. ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը ողջունում են կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքին առնչվող գործող իրավական դաշտը փոփոխելու Հայաստանի ջանքերը, որոնց նպատակն է այն համապատասխանեցնել կրոնի կամ համոզմունքի ազատության միջազգային ստանդարտներին և 2015 թվականին ընդունված նոր Սահմանադրությանը: Ընդհանուր առմամբ, Օրենքի նախագիծը գործողի համեմատաբար լավն է, ունի պատշաճ կառուցվածք, և անդրադառնում է նման օրենսդրության կարգավորման ենթակա հիմնական հարցերի մեծ մասին: Այնուհանդերձ, Օրենքի նախագիծը կշահեր որոշ պարզաբանումներից և փոփոխություններից, որոնք կապահովեին դրա համապատասխանությունը միջազգային ստանդարտներին և ԵԱՀԿ-ի շրջանակում ստանձնած հանձնառություններին:

10. Օրենքի նախագիծը միջաբարբարելավումներ է պարունակում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպություններին մասին» Հայաստանի Հանրապետության (1991 թվականին ընդունված և վերջին անգամ 2011 թվականին փոփոխված)⁴ գործող օրենքի համեմատությամբ: Օրենքի նախագծում արտացոլվել են կրոնի կամ համոզմունքի ազատության մասին Հայաստանի օրենսդրության վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից նախկին եզրակացություններում արված որոշ առաջարկություններ: Նշանակալից փոփոխություններից, որոնց մասին նշվել էր ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի 2017 թվականի եզրակացության մեջ,⁵ հարկ է առանձնացնել այն, որ Օրենքի նախագիծն այժմ կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքը երաշխավորում է ոչ միայն Հայաստանի քաղաքացիներին, այլև՝ յուրաքանչյուր անձի (տե՛ս Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը): Օրենքի նախագիծը ներառում է նաև սեփական կրոնը, հավատը կամ համոզմունքը փոխելու իրավունքը, սեփական կրոնը, հավատը կամ համոզմունքն հրապարակավ կամ մասնավոր կարգով դավանելու ազատությունը, ինչպես նաև առօրյա կյանքում սեփական կրոնին, դավանանքին կամ համոզմունքներին համաձայն գործելու ազատությունը (տե՛ս

⁴ Սույն է համացանցում՝ <<http://www.legislationline.org/topics/country/45/topic/78>>:
⁵ Տե՛ս էջատակի 1-ին ծանոթագրությունը, 21-րդ կետ (ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի 2017 թվականի համատեղ եզրակացություն):

Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասը), որոնք բոլորը կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքի կարևորագույն բաղադրիչներ են: Ավելին, Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ «խղճի և կրոնի ազատության արտահայտումը պայմանավորված չէ կրոնական կազմակերպությունն ստեղծելու կամ դրա հավատացյալ լինելու հանգամանքով», որից բխում է, որ կրոնական/համոզմունքային համայնքներն իրավունք ունեն իրենց իրավունքներն իրացնել առանց պետական գրանցման, թեպետ ցանկալի կլինեք դատելի ուղղակիորեն ձևակերպել:

11. Մինևույն ժամանակ, նկատվել է, որ ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի կողմից 2017 թվականի եզրակացության հիմքում ընկած Օրենքի նախագծի որոշ դրական դրույթներ այժմ հանվել են Օրենքի նախագծի ներկայիս տարբերակից: Ավելին, նախկին եզրակացության ներքո մարված որոշ կարևոր առաջարկություններ հաշվի չեն առնվել, և Օրենքի նախագիծը շարունակում է մտահոգության տեղիք տալ մի քանի հարցերով, որոնց անհրաժեշտ է անդրադարձնել նախքան ընդունումը, հատկապես կրոնի կամ համոզմունքի ազատության արտահայտումը սահմանափակող դրույթների շրջանակի և ձևակերպումների առումով, ինչպես նաև կրոնական կազմակերպությունները գրանցելու պահանջներին մասով:

12. Մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին և ԵԱՀԿ-ի շրջանակում ստանձնած հանձնառություններին Օրենքի նախագծի համապատասխանությունն էլ ավելի բարելավելու նպատակով ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը սույնով ներկայացնում են հետևյալ հիմնական առաջարկությունները.

- A. Փոփոխել Օրենքի նախագիծը՝ դրանում համակարգված կերպով հղում անելով ոչ միայն «կրոնին», այլ նաև՝ «համոզմունքին», ինչպես նաև՝ «կրոնական կամ համոզմունքային կազմակերպություններին», [պարբ. 20]
- B. Դիտարկել այնպիսի դրույթ սահմանելու նպատակահարմարությունը, որով կրոնական այլ խմբերին կամ համոզմունքային համայնքներին արդար հնարավորություն կրնձեռվի օգտվելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն վերապահված առավելությունների որոշ մասից մինևույն ժամանակ սահմանելով այդ առավելություններից օգտվելու ողջամիտ չափանիշներ, [պարբ. 28]
- C. Ավելի նեղ շրջանակով և ավելի խիստ չափանիշներով սահմանել կրոնի կամ համոզմունքի ազատության արտահայտման՝ 4-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները, մասնավորապես հետևյալ կերպ.
 - Հանել «պետական անվտանգության» մասին նշումը՝ այն միջազգային ստանդարտներին համահունչ փոխարինելով «հասարակական անվտանգություն» եզրույթով, կամ որպես այլ ընտրանք՝ սահմանել, որ Օրենքի նախագծի իմաստով «պետական անվտանգություն» եզրույթը պետք է մեկնաբանվի միջազգային ստանդարտներին համահունչ որպես «հասարակական անվտանգություն և կարգ», [պարբ. 39]
 - Դիտարկել 4-րդ հոդվածից սահմանափակման այն հիմքերը հեռացնելու նպատակահարմարությունը, որոնք լայնորեն կամ ադոտ կերպով են ձևակերպված, կամ՝ դրանք սահմանել ավելի նեղ կերպով, հատկապես՝ «հակաօրինակական կամ հակաբարոյական

արարք», «կրոնական մոլեռանություն» և «շահադիտական նպատակներ» արտահայտությունները միևնույն ժամանակ արգելելով կրոնական հիմքերով բռնության դրդելը կամ արգելելով կրոնական ատելության այնպիսի քարոզը, որը դրդում է խտրականության, թշնամանքի կամ բռնության, [պարբ. 422-466]

- Ապահովել, որպեսզի արգելված լինի միայն «ոչ պատշաճ պրոսեկյուցիվ», այսինքն այնպիսի «քարոզը» կամ «ուսուցումը», որն ուղեկցվում է բռնության կամ կրոնական ատելության կամ սահմանված որոշակի անօրինական արարքներ կատարելու դրդմամբ, հարկադրանքով կամ խաբեությունամբ, նորանդամներ ձեռք բերելու կամ կարիքի կամ նեղության մեջ գտնվող անձանց նկատմամբ անպատշաճ ճնշում գործադրելու նպատակով նյութական կամ սոցիալական առավելություններ առջարկելով, բռնության գործադրմամբ, բռնության որոշակի ձևով կամ դիրքի չարաշահման միջոցով անպատշաճ ճնշման կիրառությունամբ կամ մասնավոր կյանքը կամ հասարակական կարգը խախտող քարոզի այլ ազդեցիվ ձևերով, [պարբ. 466]

D. Օրենքի նախագծում ուղղակիորեն նշել, որ կրոնական կամ համոզմունքային խմբերն իրավունք ունեն գոյություն ունենալ և գործել առանց գրանցման [պարբ. 32], նախատեսել կրոնական կամ համոզմունքային բոլոր գրանցված և չգրանցված համայնքներին վերաբառված իրավունքներն ոչ սպառիչ թվարկում՝ ներառյալ կրոնի ազատությունը կոլեկտիվորեն իրացնելու իրավունքը [պարբ. 33], և հստակեցնել, որ կրոնական կամ համոզմունքային ցանկացած համայնք կարող է իրավաբանական անձի որոշակի կարգավիճակ ստանալ ազգային իրավակարգում [պարբ. 34],

E. Վերացնել գրանցման որոշ պահանջներ, որոնք չափազանց ծանր են և/կամ խտրական, մասնավորապես 8-րդ հոդվածում առավել հստակորեն սահմանելով այն խիստ սահմանափակ թվով դեպքերը, որոնցում պետական գրանցումը կարող է միջազգային ստանդարտներին համապատասխան մերժվել, և Օրենքի նախագծից հանել 8-րդ հոդվածի 1-ին մասի (4)-րդ և (5)-րդ կետերը և 8-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք համապատասխան արար հղում են կատարում «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի», այն փաստին, որ «իր դավանանքով մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական համայնքներին համակարգի մեջ» և «օտարերկրյա հոգևոր կենտրոնի առկայություն դեպքում վերջինիս համաձայնությունը հավաստող փաստաթուղթը» ներկայացնելու պահանջին, [պարբ. 58]

F. Վերանայել 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ օտարերկրյա ֆինանսավորման բացարձակ արգելքը, [պարբ. 755]

G. Հստակեցնել կրոնական կազմակերպության գործունեություն կասեցման մասին 6-րդ գլխով սահմանված կանոնները՝ հստակորեն սահմանելով «օրենքի կոպիտ խախտում» եզրույթի մաստը և ներդնելով կիրառվող համաչափ պատիժներին ավելի լայն տեսականի, ինչպես նաև սահմանել, որ լուծարումը թույլատրելի է միայն այն ժամանակ, երբ խախտումը վերացնելու կամ կանխելու այլ միջոցները սպառվել են, կամ երբ խախտումներն հնարավոր չէ պատժել կամ վերացնել այլ կերպ կիրառելով վարչական, քաղաքացիական կամ քրեական իրավունքի նորմերը: [պարբ. 79, 811 և 877]

Այս առաջարկն ինչպես նաև ներկայացված քննարկումն ունենում է շահագործող անհատի կողմից ներդրում կատարելու նպատակով ընդգծված ռոնդայի առաջարկն ինչպես նաև ներկայումս:

IV. Վերլուծությունը և առաջարկն ինչպես նաև ներքին

A. Կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքին առնչվող միջազգային ստանդարտները և ԵԱՀԿ-ի շրջանակում ստանձնված հանձնառությունները

13. Կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքին առնչվող միջազգային ստանդարտները և ԵԱՀԿ-ի շրջանակում ստանձնված հանձնառություններն ուսումնասիրելու համար ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը սույն դեպքում կատարում են կատարում ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի 2017 թվականի եզրակացություն IV մասի 1-ին ենթաբաժնին և նրանց նախկին համատեղ եզրակացություններին: Ստորև բերված առաջարկն ինչպես նաև ներքին ըստ անհրաժեշտության հղում է արվում նաև ոչ պարտադիր բնույթ ունեցող այլ փաստաթղթերի, որոնք առավել մանրակրկիտ ուղենիշներ են պարունակում, մասնավորապես՝ Կրոնի կամ համոզմունքի վերաբերող օրենսդրության փորձաքննության ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի 2004 թվականի համատեղ ուղենիշները⁶ (հետագայում՝ «Կրոնի կամ համոզմունքի ազատության վերաբերյալ 2004 թվականի ուղենիշներ»), Կրոնական կամ համոզմունքի համայնքների իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի 2014 թվականի համատեղ ուղենիշները⁷ (հետագայում՝ «Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թ. ուղենիշներ»), և Միավորման ազատության վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի 2015 թվականի համատեղ ուղենիշները:⁸

B. Ազգային իրավական դաշտը

14. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հունիսի 5-ի (վերջին անգամ փոփոխվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին) Մահմանադրության («Մահմանադրություն») 41-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Մասնավորապես, «մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլ ոչ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով» (41-րդ հոդվածի 2-րդ մաս): 41-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակիորեն նշվում են «կրոնական կազմակերպությունները», և ընդգծվում է, որ նրանք իրավահավասար են և օժտված են ինքնավարությունով, և որ կրոնական կազմակերպություններին ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

⁶ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ և Վենետիկի հանձնաժողով, Կրոնի կամ համոզմունքի վերաբերող օրենսդրության փորձաքննության ուղենիշներ (2004 թ.), http://www.legislationline.org/download/action/download/id/2283/file/Guidelines_Review_Legislation_Religion_Belief.pdf (հետագայում՝ «Կրոնի կամ համոզմունքի ազատության վերաբերյալ 2004 թ. ուղենիշներ»):
⁷ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ և Վենետիկի հանձնաժողով, Կրոնական կամ համոզմունքի համայնքների իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ ուղենիշներ (2014 թ.), <http://www.osce.org/odihr/139046?download=true> (հետագայում՝ «Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թ. ուղենիշներ»):
⁸ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ և Վենետիկի հանձնաժողով, Միավորման ազատության վերաբերյալ ուղենիշներ (2015 թ.), <http://www.osce.org/odihr/132371> (հետագայում՝ «Միավորման ազատության վերաբերյալ 2015 թ. ուղենիշներ»):

Մահմանելևոյ կրոնական կազմակերպությունների և պետություն անջատ լինելու սկզբունքը (Մահմանադրություն 17-րդ հոդվածի 2-րդ մաս), Հայաստանի Հանրապետությունը «Ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ որպես ազգային եկեղեցու քաղաքիկ առաքելությունը՝ հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնություն պահպանման գործում» (Մահմանադրություն 18-րդ հոդվածի 1-ին մաս): 18-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»:

15. Մահմանադրություն 29-րդ հոդվածը պարունակում է դրույթ, որով սահմանվում է խտրականությունը ընդհանուր արգելքը՝ հիմքերի շարքում թվարկելով, ի թիվս այլ հիմքերի, «կրոնը, աշխարհայացքը, քաղաքական կամ այլ հայացքները, ... կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքները»:

16. Մահմանադրություն 77-րդից 81-րդ հոդվածները ներառում են մարդու իրավունքներ և հիմնական ազատությունների սահմանափակումների անհավոգ կոնկրետ դրույթներ, մասնավորապես՝ իրավական որոշակիություն և համաչափություն սկզբունքները, ամրագրելով, որ «հիմնական իրավունքներ և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները» (81-րդ հոդվածի 2-րդ մաս):

C. Ընդհանուր մեկնաբանություններ

17. ԵԱՀ ԿԺՆ ՄԻԳ-ը և Վեներտիկի հանձնաժողովը նախատառ ռոջում են Օրենքի նախագծի այն դրույթները, որոնցում հաշվի են առնվում իրենց կողմից նախկինում ներկայացված համատեղ եզրակացություններում արված առաջարկությունների մի մասը՝ մասնավորապես հետևյալ առումներով.

- Այն դրույթը, որում ուղղակիորեն նշվում է, որ խղճի և կրոնի ազատության արտահայտման, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով (տե՛ս Օրենքի նախագծի 2-րդ հոդվածը),⁹
- Այն փաստը, որ խղճի կամ կրոնի ազատությունը երաշխավորվում է ոչ միայն Հայաստանի քաղաքացիներին (ինչպես այժմ է նախատեսված 1991 թվականին ընդունված և ներկայումս գործող օրենքով), այլ և՛ յուրաքանչյուր անձի (տե՛ս Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը),¹⁰
- Դրույթները, որոնք ուղղակիորեն պարունակում են սեփական կրոնը, հավատը կամ համոզմունքը փոխելու իրավունքը, սեփական կրոնը, հավատը կամ համոզմունքն *հրապարակա՛վ կամ մասնավոր կարգով* դավանելու ազատությունը, և առօրյա կյանքում սեփական կրոնին, հավատին կամ համոզմունքին համաձայն գործելու իրավունքը (Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս), քանի որ դրանք բոլորը կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքի

⁹ Տե՛ս էջ առաջի 3-րդ ծանոթագրությունը, 25-րդ կետ (2011 թվականի համատեղ եզրակացություն):
¹⁰ Տե՛ս նույն տեղը, 22-րդ կետ (2011 թվականի համատեղ եզրակացություն):

հիմնարար քաղաքիչ ներքեն, որոնք ներկայումս հիշատակված չեն 1991 թվականի օրենքում,¹¹

- Ծնողներին և այլ օրինական ներկայացուցիչներին (որդեգրողներին, խնամակալներին կամ հոգաբարձուներին) իրավունքը՝ սպասնվելու իրենց մինչև 16 տարեկան երեխաներին (որդեգրվողներին, խնամարկյալներին) կրոնական դաստիարակությունն իրենց սեփական համոզմունքներին համապատասխան (Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 7-րդ մաս),¹²
- Մեփական կրոնը կամ համոզմունքն արտահայտելու իրավունքի ընդարձակումը՝ դրանում ներառելով ոչ միայն եկեղեցական արարողությունները կամ պաշտանմունքի ծիսակատարությունները, այլ նաև պաշտանմունքի այլ դրսևորումները (Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս), որի արդյունքում այս դրույթն այլևս չի սահմանափակվում միայն ավանդական կրոններով կամ միայն ավանդական կրոնին համանման պաշտանմունք կամ ինստիտուցիոնալ հատկանիշներ ունեցող կրոններով և համոզմունքներով,¹³
- Այն փաստը, որ խղճի և կրոնի ազատության արտահայտման նախապայման չէ կրոնական կազմակերպության ստեղծումը կամ կրոնական կազմակերպության հավատացյալ լինելը (Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ մաս),⁷
- 1991 թվականի գործող օրենքի 8-րդ հոդվածով ներկայումս նախատեսված՝ հոգեորություն ուղղակի արգելքի հանումը,¹⁴ թեպետ Օրենքի նախագծի որոշ այլ դրույթներ հնարավոր է շարունակեն սահմանափակել իրավաչափ պրոսեկյուտիվ ռոնշ ձևեր (տես ստորև՝ 46-րդ կետը):

D. Օրենքի նախագծի շրջանակը՝ կապված «համոզմունքի» ազատության հետ

18. Օրենքի նախագծի՝ 1-ին և 2-րդ հոդվածներում սահմանված շրջանակը վերաբերում է միայն «խղճի և կրոնի ազատությանը» և «կրոնական կազմակերպություններին»՝ չհիշատակելով, սակայն, համոզմունքի ազատությունը, թեպետ Օրենքի նախագծի որոշ այլ դրույթներում հիշատակվում է «համոզմունք» բառը:¹⁵ Օրենքի նախագծի ողջ տեքստում հղումներ են արվում միայն «կրոնական կազմակերպություններին», բայց ոչ մարդկանց համոզմունքներին վրա հիմնված այլ կազմակերպություններին: Օրենքի նախագծի շրջանակից պարզ չէ, թե արդյոք Օրենքի նախագծի տարածվում է նաև «համոզմունքներին» նկատմամբ: Ավելին, Օրենքի նախագծի նախորդ տարբերակում կար մտքի ազատության մասին նշում, որը հանվել է:

19. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներին մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի¹⁶ 18-րդ հոդվածը (հետայսու՝ «ՔՔԻՄ») և

¹¹ Տե՛ս նույն տեղը, 22-րդ կետ (2011 թվականի համատեղ եզրակացություն):
¹² Տե՛ս նույն տեղը, 26-րդ կետ (2011 թվականի համատեղ եզրակացություն):
¹³ Տե՛ս նույն տեղը, 24-րդ կետ (2011 թվականի համատեղ եզրակացություն):
¹⁴ Տե՛ս նույն տեղը, 43-60-րդ կետեր (2011 թվականի համատեղ եզրակացություն):
¹⁵ Տե՛ս «համոզմունք» բառի օգտագործումն Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերում, 4-րդ հոդվածի 2-րդ մասի (4)-րդ կետում և 3-րդ մասում, 5-րդ հոդվածում և 8-րդ հոդվածի 5-րդ մասի (3)-րդ կետում:
¹⁶ Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքներին մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի (հետայսու՝ «ՔՔԻՄ»), որն ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 2200A (XXI) բանաձևով: Հայաստանի Հանրապետությունը միացել է ՔՔԻՄ-ին 1993 թվականի հունիսի 23-ին:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն է վրոպական կոնվենցիայի¹⁷ (հետագայում՝ «ՄԻԵԿ») 9-րդ հոդվածը, ինչպես նաև ԵԱՀԿ-ի շրջանակում ստանձնած հանձնառությունները,¹⁸ երաշխավորում են ոչ միայն կրոնի ազատությունը, այլ նաև «համոզմունքի ազատությունը»¹⁹ Ավելին, ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն ուղղակիորեն նշել է, որ «մտքի ազատությունը» և «խղճի ազատությունը» պաշտպանվում են նույն չափ, որ չափ կրոնի և համոզմունքի ազատությունը,²⁰ միևնույն ժամանակ ասպահովելով ԲԲԻՄԻ-ի 18-րդ և ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածներով պաշտպանվող արժեքների տարածական մեկնաբանությունն հնարավորությունը՝ ներառելով որևէ կրոն կամ համոզմունք չդավանելու իրավունքը:²¹

20. Թեպետ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի պատվիրակությունն այցի ժամանակ նշվեց, որ «համոզմունքային կազմակերպությունները» կարգավորվելու են ՀԿ-ների գործունեությունը կարգավորող առանձին օրենսդրություններով, դա կնշանակե, որ «համոզմունքային կազմակերպությունները» հնարավոր է չօգտվեն նույն իրավունքներից և երաշխիքներից, ինչ «կրոնական կազմակերպությունները»: «Կրոնական կազմակերպություններին» և «համոզմունքային կազմակերպություններին» միջև նման տարբերակված վերաբերմունքը դժվար է հիմնավորել, ուստի՝ այն կարող է առաջացնել խտրականություն: Հետևաբար, խորհուրդ է տրվում կրոնական և համոզմունքային կազմակերպությունները կարգավորել միևնույն օրենսդրությամբ: Այսպես, Օրենքի նախագծի լայն ընդգրկման ներառյալ ոչ կրոնական համոզմունքների հարցում անորոշությունից խուսափելու համար խորհուրդ է տրվում փոխել Օրենքի նախագծի վերնագիրը և շրջանակը՝ դրանցում հղում կատարելով «մտքի, խղճի, կրոնի կամ հավատի ազատությանը», միևնույն ժամանակ Օրենքի նախագծի ողջ տեքստում ասպահովելով ոչ միայն «կրոնի», այլ նաև «կրոնական կամ համոզմունքային կազմակերպություններին», ինչպես նաև ոչ կրոնական

¹⁷ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն մասին էվրոպական կոնվենցիան (հետագայում՝ «ՄԻԵԿ»), որը ստորագրվել է 1950 թվականին ունի 4-ին, ու ժի մեջ մտել՝ 1953 թվականի սեպտեմբերի 3-ին: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԻԵԿ-ը 2002 թվականի ապրիլի 26-ին:

¹⁸ Տե՛ս, մասնավորապես, ԵԱՀԿ, ԵԱՀԿ-ի մարդկային տարածաշափի խորհրդաժողովի Կոպենհագենի նիստի փաստաթուղթը (Կոպենհագեն, 5 հունիս-29 հունիս, 1990 թ.), 5-րդ կետ և 5.12 կետ, <<http://www.osce.org/fr/odhr/elections/14304>>, ինչպես նաև ԵԱՀԿ, Նախարարական խորհրդի թիվ 3/13 որոշումը մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքի ազատության մասին (Կիև, 2013 թ.), <<http://www.osce.org/mc/109339>>: ԵԱՀԿ-ի մարդկային տարածաշափում ստանձնած այս և այլ հանձնառությունների վերաբերյալ տե՛ս ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ, Մարդկային տարածաշափում ստանձնած հանձնառությունները (թեմատիկ հավաքածու), 3-րդ հրատարակություն, հատկապես 3.1.8 կետը, <<http://www.osce.org/odhr/76894>>:

¹⁹ Տե՛ս նաև էջատակի 6-րդ ծանոթագրությունը, Մաս II.A.3, էջեր 4-5 (Կրոնի կամ համոզմունքի ազատության վերաբերյալ 2004 թ. ուղենիշներ):

²⁰ Տե՛ս ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի, Թիվ 22 քննիչականության մեկնաբանությունը մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի մասին (ԲԲԻՄԻ-ի 18-րդ հոդված), 27 սեպտեմբեր, 1993 թ., 1-ին կետ, առկա է հետևյալ հղումով: <http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR%2fC%2f21%2fRev.1%2fAdd.4&Lang=en>:

²¹ Տե՛ս նույն տեղը, 1-2-րդ կետեր (ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի, Թիվ 22 քննիչականության մեկնաբանությունը): Տե՛ս նաև արժեքների (օրինակ՝ պացիֆիզմի, աթեիզմի և վեգանիզմի) կամ որոշակի քաղաքական գաղափարախոսությունների (օրինակ՝ կոմունիզմի) վերաբերյալ նշումը, որոնց վերաբերյալ ՄԻԵԿ-ն համարեց, որ դրանք առերևույթ ընկնում են ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի տակ: Տե՛ս Մարդու իրավունքների էվրոպական հանձնաժողով (EComHR), *Arrowsmith v. the United Kingdom* (գանգատ թիվ 16 մայիսի, 1977/1978 թ.), <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-74916>>, *Angelini v. Sweden* (գանգատ թիվ 10491/83, որոշումը՝ 3 դեկտեմբերի, 1986 թ.), <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-78932>>, *W v. the United Kingdom* (գանգատ թիվ 18187/91, որոշումը՝ 10 փետրվարի, 1993 թ.), <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-1503>>, *Hazar, Hazar and Acik v. Turkey* (գանգատներ թիվ 16311/90, 16312/90 և 16313/90, որոշումը՝ 11 հոկտեմբերի, 1991 թ.), <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-1178>>:

համոզմունքների ընդգրկումը, որը համահունչ կլինի ՔՔԻՄԴ-ի 18-րդ հոդվածին, ՄԵԿ-ի 9-րդ հոդվածին և ԵԱՀԿ-ի շրջանակում ստանձնած հանձնառություններին:²²

²² Դրավերաբերյալ հանձնարարական արդեն իսկ ներկայացվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2017 թվականի եզրակացության 25-րդ պարբերությունում:

E. Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցին

1. Օրենքի նախագծի ն «Հայ աստանյայց Հանրապետության և Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցու հարաբերություններին մասին» Հայ աստանյայց Հանրապետության 2007 թվականին ընդունված օրենքի փոփոխության նախագծի նախագծի

21. Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ «Հայ աստանյայց Հանրապետության տարածքում գործում են Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցին իր ավանդակազմի կազմակերպություններով և այլ կրոնական կազմակերպությունները»: Այդ դրույթից կարծես բխում է, որ Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցու որպես կրոնական կազմակերպության նկատմամբ սկզբունքորեն պետք է կիրառել ի ինքնին Օրենքի նախագծով և այլ օրենքներով նախատեսված, մինչև նախատարրությունները և սահմանափակումները, ինչ կրոնական (կամ համոզմունքային) ցանկացած այլ կազմակերպության նկատմամբ: Ավելին, Օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ ի հակադրություն այլ կրոնական կազմակերպություններին, Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցու անվանումը կարող է չպարունակել «կրոնական կազմակերպություն» բառերը: Դա կարող է նշանակել, որ Օրենքի նախագծով սահմանվող պարտավորությունները և պահանջները Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցու ազատան բոլոր դեպքերում պետք է ուղղակիորեն նշված լինեն օրենքում: Եվ քանի որ Օրենքի նախագծում ազատան այլ դեպքեր են հիշատակվում, մնում է ենթադրել, որ Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցու նկատմամբ կիրառվում են Օրենքի նախագծով սահմանված բոլոր պարտավորությունները (տե՛ս ստորև ենթաբաժին «Ի»):

22. Մինչև նախագծի նախագծի, Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցու հատուկ դերը վերաբերում է Սահմանադրության 18-րդ հոդվածով, որով ճանաչվում է Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցու «բացառիկ առաքելությունը»²³ և նրա որպես «ազգային եկեղեցու» կարգավիճակը: Ավելին, Հայ աստանյայց Հանրապետության և Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցու հարաբերությունները ներկայումս կարգավորվում են «Հայ աստանյայց Հանրապետության և Հայ աստանյայց Առաքելակազմի Մուրթ եկեղեցու հարաբերություններին մասին» Հայ աստանյայց Հանրապետության 2007 թվականին ընդունված օրենքով (հետագայում

²³ Հարկ է կրկնել, որ Վենետիկի հանձնաժողովն Հայ աստանյայց Հանրապետության Սահմանադրության փոփոխություններին նախագծի (գլուխներ 1-7 և 10) վերաբերյալ իր առաջին եզրակացությունում մեջ որոշակի մտահոգություն էր հայտնել ՀԱՄԵ-ի «բացառիկ առաքելություն» ճանաչման վերաբերյալ, CDL-AD(2015)037, պարբ. 32-33, <[http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2015\)037-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)037-e)>: Հայ աստանյայց Հանրապետության Սահմանադրության փոփոխություններին նախագծի վերաբերյալ երկրորդ եզրակացությունում մեջ (CDL-AD(2015)038, պարբ. 16) Վենետիկի հանձնաժողովը նշել էր, որ Հայ աստանյայց իշխանություններին բացատրության համաձայն 17-րդ հոդվածով օգտագործված հայերեն եզրույթի ճիշտ անգլերեն թարգմանությունն է ոչ թե «exclusive», այլ «unique» բառը «exceptional» իմաստով, որն ավելի ընդունելի է՝ այնքանով, որքանով պատահաբար տրամ է հայկական ազգային ինքնություն պահպանման գործում ՀԱՄԵ-ի պատմական հատուկ առաքելություն ճանաչումը, այլ ոչ նրան էքսկլուզիվ դիրք վերաբերում այլ դավանանքներին նկատմամբ:

«2007 թվական օրենք»):²⁴ 2007 թվական օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, թեպետ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին «կարգավորման սկզբունքները» սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (տե՛ս վերը՝ 14-րդ կետը), դրանց ընդհանուր հարաբերությունները պետք է սահմանվեն «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և միջազգային պայմանագրերով: Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու որպես ազգային եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունները պետք է սահմանվեն 2007 թվական օրենքով: Դա կարծես հուշում է, որ 2007 թվական օրենքը համարվում է հատուկ օրենք, իսկ Օրենքի նախագիծը՝ դրան կատարմամբ ավելի ընդհանուր օրենք: Ուստի, 2007 թվական օրենքի և Օրենքի նախագիծին նորմերի ցանկացած հակասություն պետք է լուծվի կիրառելով «*lex specialis derogat legi generali*» սկզբունքը, այսինքն՝ 2007 թվական օրենքը որպես հատուկ օրենք պետք է գերակայի Օրենքի նախագիծում գետեղված և հնարավոր հակասություն պարունակող նորմերի նկատմամբ: Օրենքի նախագիծը և 2007 թվական օրենքի միջև այդ հարաբերության փաստը հաստատվեց Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի երկիր կատարած այցելություն ընթացքում:

23. Դա, մասնավորապես, կնշանակեր, որ թեպետ Օրենքի նախագիծը պարտադիր է նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու համար, վերջինս կարող է ազատվել Օրենքի նախագիծով կրոնական կազմակերպությունների վրա դրվող որոշակի պարտավորություններից կամ սահմանափակումներից այն դեպքերում, երբ դրանք կհամարվեն 2007 թվական օրենքին հակասող:²⁵

²⁴ Առկա է համացանցում՝ http://www.legislationline.org/download/action/download/id/7241/file/Armenia_Law_State%20and%20Holy%20Apostolic%20Church_2007_en.pdf:

²⁵ Օրինակ, 2007 թվականի օրենքի 8-րդ հոդվածը կրթական ոլորտում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարման վերաբերյալ կամ 10-րդ հոդվածն հիվանդանոցներում, մանկատներում, տուն- ինտերնատներում, գործարարներում, ազատագրկման վայրերում մշտական հոգևոր ներկայացուցիչ ունենալու՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունքի մասին, որոշակիորեն հակասում է Օրենքի նախագիծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի (2)-րդ կետին (որով արգելվում է կրոնական քարոզչությունը այն պայմաններում, երբ կրոնական քարոզչական կրթական հաստատություններում կամ դրանց մոտակայքում, որտեղ դաստիարակվում կամ ուսումնառում են նրանց մինչև 16 տարեկան երեխաները) և 4-րդ հոդվածի 2-րդ մասի (5)-րդ կետին (որով արգելվում է կրոնական քարոզչությունը կամ կրոնական բնույթի քարոզչական նյութերի տարածումը խաղահարկարակների, մանկապատանեկան մշակութային կրթօջախներին, հիվանդանոցներին, ծերանոցներին և հասարակության խոցելի այլ խմբերի համար նախատեսված հաստատություններում կամ դրանց մոտակայքում): 2007 թվականի օրենքի 11-րդ հոդվածով չեն նախատեսվում հանրային դրամատիկական ցուցանիշներ իրականացնելու և նվիրատվություններ ստանալու որևէ սահմանափակումներ, մինչդեռ Օրենքի նախագիծի 11-րդ հոդվածի 2-րդ մասով արգելվում է ֆինանսավորումը կուսակցությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող իրենց հոգևոր կենտրոնների կողմից: 2007 թվականի օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվում են պետական ֆինանսական աջակցություն որոշ ձևեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ ազգային մշակութային ժառանգության մաս կազմող գույքի պահպանության համար, մինչդեռ Օրենքի նախագիծի 12-րդ հոդվածի (3)-րդ կետով արգելվում է կրոնական կազմակերպությունների պետական ֆինանսավորումը: 2007 թվականի օրենքով նաև ճանաչվում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրազորածամաճուսնությունները և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներգրավումը կրթության մասին ֆինանսավարին (օրինակ՝ հիմնելու կամ հովանավորելու կրթական հաստատություններ, մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը): Օրենքի նախագիծով նաև մի շարք պահանջներ կամ պարտավորություններ են նախատեսվում, որոնք կիրառելի են բոլոր կրոնական կազմակերպություններին և ներքին (օրինակ՝ 8-րդ հոդվածի 5-րդ մասը՝ կանոնադրություններում նույնպես պարտավորություններ ընդ որում՝ կանոնադրությունները պետք է ներառի մի շարք մանրակրկիտ տեղեկություններ կազմակերպության և կրոնական կազմակերպության ղեկավարման մասին, կամ՝ 11-րդ հոդվածի 1-ին մասի (3)-րդ կետը և 13-րդ հոդվածը՝ կրոնական կազմակերպությունների նկատմամբ կիրառելի հաշվետվական պահանջներին մասով, ինչպես նաև 16-րդ հոդվածը՝ կրոնական կազմակերպության

24. Այս համատեքստում անորոշությունն ինչ խուսափելու համար ցանկալի է, որ պեսուգի նախագծի հեղինակները քննարկեն նաև հստակեցնեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ Օրենքի նախագծի կիրառելիության հարցը, ինչպես նաև հստակեցնեն, թե Օրենքի նախագծի որ հոդվածներն են կիրառելի, իսկ որոնք՝ ոչ կիրառելի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ:

2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակը

25. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այլ կրոնական կազմակերպությունների համեմատությամբ օգտվում է մի շարք առավելություններից, որոնք սահմանված են 2007 թվականի օրենքով:²⁶

26. ԵԱՀ Կ/ԺՀ ՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին համատեղ եզրակացություններում արդեն իսկ ճանաչվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատուկ պատմական դերը Հայաստանի Հանրապետությունում՝ մեկնաբանելով, որ նրա առանձնահատուկ կարգավիճակն ինքնին անթույլատրելի է, այլ՝ որ չպետք է թույլ տալ, որ պեսուգի այն կրոնական կամ համոզմունքային այլ համայնքների նկատմամբ խտրականություն հանգեցնի կամ նման խտրականություն հիմք ծառայի:²⁷ Վենետիկի հանձնաժողովին և ԵԱՀ Կ/ԺՀ ՄԻԳ-ին չի խնդրվել փորձաքննություն անել 2007 թվականի օրենքը, և նրանք չեն վերլուծել, թե ինչ արտոնություններ կարող են այդ օրենքով ընձեռվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Այնուամենայնիվ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և կրոնական (կամ համոզմունքային) այլ կազմակերպությունների նկատմամբ վերաբերմունքի տարբերությունները կարող են մեկնաբանել որպես խտրականություն:²⁸

27. Այս հարցում Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀ Կ/ԺՀ ՄԻԳ-ը Հայաստանի իշխանություններին հուշում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (հետագայում՝ «ՄԵԴ») դատական նախադեպի մասին, որում նշվում է, որ կրոնական որոշակի համայնքների նախապատվությունները վերաբերող համակարգերն սկզբունքորեն չեն հակասում ՄԵԿ-ի պահանջներին՝ պայմանով, որ պետությունը կատարի չեզոքություն իր պարտականությունները, որ վերաբերմունքի տարբերությունն ունենա օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում, և որ կրոնական համայնքներն ունենան ցանկություն դեպքում արտոնյալ կարգավիճակի համար

գործունեություն վերահսկողություն մասին), և պարզ է, թե արդյոք դրանք պարտադիր են նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու համար:

²⁶ Տե՛ս վերը էջատակի 25-րդ ծանոթագրությունը:

²⁷ Տե՛ս էջատակի 3-րդ ծանոթագրությունը, 20-րդ կետ (2012 թվականի համատեղ եզրակացություն), տե՛ս էջատակի 2-րդ ծանոթագրությունը, 10-րդ կետ (2010 թվականի համատեղ եզրակացություն) և 20-21-րդ կետեր (2009 թվականի համատեղ եզրակացություն): Տե՛ս նաև էջատակի 6-րդ ծանոթագրությունը, Մաս II.B.3, էջ 6 (Կրոնի կամ համոզմունքի ազատության վերաբերյալ 2004 թ. ուղենիշներ): Տե՛ս էջատակի 7-րդ ծանոթագրությունը, 40-րդ կետ (Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թ. ուղենիշներ), ինչպես նաև էջատակի 20-րդ ծանոթագրությունը, 9-րդ կետ (ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի 1993 թ. թիվ 22 ընդհանուր մեկնաբանությունը), որում նշվում է. «Այն փաստը, որ մի կրոնը ճանաչված է որպես պետական կրոն, կամ կայացած է որպես պաշտոնական կամ ավանդական, կամ որ դրա հետևորդները բնակչության մեծամասնությունն են, չպետք է որևէ կերպ սահմանափակի ՔՔԻՄԻ-ով ներառյալ 18-րդ և 27-րդ հոդվածներով նախատեսված որևէ իրավունքի իրականացումը, և չպետք է որևէ խտրականություն առաջացնի այլ կրոնների հետևորդների կամ ոչ հավատացյալ անձանց նկատմամբ»:

²⁸ Տե՛ս, օրինակ, ՄԵԴ, *Manoussakis-ն ընդդ.* Հունաստանի (զանգատ թիվ 18748/91, դատավճիռը՝ 26 սեպտեմբեր, 1996 թ.), հատկապես 48-րդ պարբերությունը, <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58071>>:

դիմելու արդար հնարավորությունն է²⁹ Այս պարագայում, սահմանվող չարտոնողիչ ներքին պետք է հետապնդվող հանրային շահերի լույսի ներքո լինեն նողջամիտ, չեզոք և ոչ խտրակամ:³⁰ Կրոնական համայնքների միջև տարբերակված վերաբերմունքի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորման առկայությունը պարզելիս ՄԻԵԴ-ը հաշվի է առնում պատմական համատեքստը և տվյալ կրոնի առանձնահատկությունները, սակայն որոշակի համակարգից օգտվելու իրավունքը միայն որոշակի կրոնական կազմակերպությունների տրամադրելու համար կարող են գոյություն ունենալ նաև այլ իրավաստի պատճառներ:³¹

28. Հաշվի առնելով վերոգրյալը և ճանաչելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու առանձնահատուկ դերը, **ցանկալի է, որ պետք է նախազօծի հեղինակներն ապահովեն, որպեսզի Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն վերապահված առավելություններն ունենան ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում, և որպես այդպիսին՝ չլինեն խտրակամ, միևնույն ժամանակ դիտարկելով այնպիսի դրույթ սահմանելու նպատակն արմարությունը, որով կրոնական կամ համոզմունքային այլ համայնքների արդար հնարավորություն կընձեռվի օգտվելու այդ առավելությունների որոշ մասից սահմանվող դրանցից օգտվելու ողջամիտ, օբյեկտիվ և ոչ խտրակամ չարտոնողիչ ներքին:** Վեներաբիլ հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ը պատրաստ են օժանդակել Հայաստանի իշխանություններին, եթե վերջիններս ցանկանան այս տեսանկյունից վերանայել 2007 թվականի օրենքը:

F. Կրոնի (կամ համոզմունքի) ազատության իրավունքը կրոնական կամ համոզմունքային չգրանցված խմբերի համար ապահովելու երաշխիքները

29. Օրենքի նախազօծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկվում են միջարքերաշխիքներ, որոնք կրոնի (կամ համոզմունքի) ազատության իրավունքի հիմնական բաղադրիչներն են, սակայն ուղղակիորեն երաշխավորված չեն 1991 թվականի օրենքով, մասնավորապես սեփական կրոնը, հավատը կամ համոզմունքը փոխելու իրավունքը, ինչպես նաև սեփական կրոնը, հավատը կամ համոզմունքն՝ հրապարակավ կամ մասնավոր կարգով դավանելու ազատությունը (տե՛ս նաև վերը՝ 17-րդ

²⁹ Տե՛ս, օրինակ, ՄԻԵԴ, *Izzettin Doğan-ը և այլք ընդդ. Թուրքիայի* [Մեծ պալատ] (զանգատ թիվ 62649/10, դատավճիռը՝ 26 ապրիլ, 2016 թ.), պարբ. 163-164 և 183, <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-162697>>, ինչպես նաև ՄԻԵԴ, *Alujer Fernandez-ը և Caballero Garcia-ն ընդդ. Իսպանիայի* (զանգատ թիվ 53072/99, որոշումը՝ 14 հունիս, 2001 թ.), <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-22645>>: Տե՛ս նաև ՄԻԵԴ, *Magyar Keresztény Mennonita Egyház-ը և այլք ընդդ. Հունգարիայի* (զանգատներ թիվ 70945/11, 23611/12, 26998/12, 41150/12, 41155/12, 41463/12, 41553/12, 54977/12 և 56581/12, դատավճիռը՝ 8 ապրիլ, 2014 թ.), պարբ. 113, <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-142196>>, որով Դատարանը վճռեց հետևյալը. «Երբ պետությունն 9-րդ և 11-րդ հոդվածների համաձայն իրավաչափորեն որոշում է ունենալ համակարգ, որում մյուսները կարող են համար սահմանադրությամբ նախատեսված է հետևել որոշակի կրոնի [..], ինչն առկա է վերոպատկարի որոշ պետություններում, և օրենքով սահմանված հանրային շահերը հետապնդելով՝ պետական օգուտները տրամադրում են միայն կրոնական որոշ կառույցների, բայց ոչ՝ մյուսներին, դա պետք է անել հանրային շահերի հետապնդմանն առնչվող ողջամիտ չարտոնողիչ ներքին պահպանմամբ»: *Religionsgemeinschaft der Zeugen Jehovas-ը և այլք ընդդ. Ավստրիայի* գործով (զանգատ թիվ 40825/98, դատավճիռը՝ 31 հունիս, 2008 թ.), պարբ. 92, <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-88022>>, ՄԻԵԴ-ը վճռեց հետևյալը. «Եթե պետությունն ստեղծում է կրոնական խմբերի իրավաբանական անձի կարգավիճակի տրաման համակարգ, որում կարգավիճակի տրամադրումը կապված է որոշակի կարգավիճակի հետ, նման ցանկությունն ունեցող կրոնական բոլոր խմբերը պետք է արդար հնարավորություն ունենան դիմելու այդ կարգավիճակի ստացման համար, և սահմանված չարտոնողիչ ներքին պետք է կիրառվեն առանց խտրականության» [ընդգծումը մերն է]: Տե՛ս նաև ՄԻԵԴ-ի *Ásatrúarfélagið-ն ընդդ. Իսլանդիայի* նախադեպը (զանգատ թիվ 22897/08, որոշումը՝ 18 սեպտեմբեր, 2012 թ.), պարբ. 34, <<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-113920>>, որով ՄԻԵԴ-ն ըստ էության վճռեց, որ Իսլանդիայի ազգային եկեղեցին իրավունք ունի ավելի շատ ֆինանսավորում ստանալու, քան ինքնուրույն համայնքները ավելի շատ պարտավորություններ ունենալու համարակալության նկատմամբ:

³⁰ Նույն տեղը:

³¹ Նույն տեղը, պարբ. 175 (ՄԻԵԴ-ի *Izzettin Doğan-ը և այլք ընդդ. Թուրքիայի* նախադեպը):

կետ): Այս դրույթն ընդհանուր առմամբ համարժեքորեն արտացոլում է ՔՔԻՄԴ-ում և ՄԻԵԿ-ում գետեղված երաշխիքները:

30. Պարզ չէ, թե արդյոք կրոնական կազմակերպության պետական գրանցումը նախապայման է կրոնի ազատության կուլեկտիվ իրացման համար: Մի կողմից, հոդվածներին մի քանիսից կարծես բխում է, որ կրոնական կազմակերպության գրանցումը դրան նախապայման չէ:³² Միևնույն ժամանակ՝ պարզ չէ, թե ինչ է լինելու գրանցման նպատակը, եթե ոչ 10-րդ հոդվածում թվարկված իրավունքները միայն գրանցված կրոնական կազմակերպություններին ընձեռելը: Այս երկրային յուրաքանչյուր 8-րդ հոդվածի ձևակերպման պատճառով, որի վերնագրում նշվում է «Կրոնական կազմակերպության ստեղծումը», մինչդեռ հոդվածի տեքստը վերաբերում է պետական գրանցմանը:

60. Օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, կրոնական կազմակերպության կանոնադրությունը պետք է ամրագրի նաև «*կրոնական կազմակերպության դավանական պատկանելությունը*» (4-րդ կետ), «*կրոնական կազմակերպության կառուցվածքը*» (8-րդ կետ) եւ «*կրոնական կազմակերպության մարմինները, դրանց ձևավորման կարգը ն ժամկետները, լիազորությունները, որոշումներին ընդունման կարգը*» (9-րդ կետ), ի թիվս այլ պահանջներին: Այս դրույթները կարծես գրանցումից դուրս են թողնում կրոնական կամ համոզմունքային այն համայնքներին, որոնք ֆորմալ կանոնակարգման եւ կազմակերպության ձեռի առումով նույն չափ կուր կառուցվածք չունեն: Այնուհանդերձ, կրոնական կամ համոզմունքային ոչ բոլոր խմբերն ունեն հստակ կառուցվածք, եւ «*կան նաև համայնքներ, որոնք ավելի թույլ կազմակերպվածություն ունեն կամ ունեն ժողովրդավարական-հորիզոնական կառուցվածք*»: ⁸² Ինչպես նշվում է Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թվականի համատեղ ուղենիշներում, հաշվի առնելով պրակտիկայում կրոնական կամ համոզմունքային համայնքներին կողմից ընտրվող տարաբնույթ կազմակերպական ձեռերը,

⁷⁹ Տե՛ս էջատակի 2-րդ ծանոթագրությունը, պարբ. 36-38 (2009 թվականի համատեղ եզրակացություն):
⁸⁰ Նույն տեղը, պարբ. 36 (գ) (2009 թվականի համատեղ եզրակացություն):
⁸¹ Տե՛ս էջատակի 2-րդ ծանոթագրությունը, պարբ. 68 (2010 թվականի համատեղ եզրակացություն): Տե՛ս նաև ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ, Մեկնաբանություններ Ղազախստանի շանրապետության կրոնական ազատության հարցերին կրոնական կազմակերպություններին մասին որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններն լրացումներ կատարելու մասին օրենքի վերաբերյալ, հունվար 2009 թ., պարբ. 60. <http://www.legislationline.org/documents/id/15504>:
⁸² Տե՛ս էջատակի 70-րդ ծանոթագրությունը, պարբ. 69 (Կոստովյանի կրոնի ազատություն մասին թիվ 02/L-31 օրենքում փոփոխություններն լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2014 թվականի եզրակացություն): [* «Կոստովյանի վերաբերյալ բոլոր նշումները՝ ներառյալ դրա տարածքի, կառույցների կամ բնակչության մասին նշումները, պետք է ամբողջովին ընկալել Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1244 բանաձևին համահունչ՝ բացառելով այդ նշումներին որևէ ազդեցությունը Կոստովյանի կարգավիճակի վրա»]:

այսու ռևոլյուցիոնար արձագանքներն օրենսդրությունը պետք է մեծ աստիճանի ճկունություն և նախատեսվի: ⁸³

61. Այդ ուղենիշներում նշվում է նաև, որ կրոնական կամ համոզմունքային կազմակերպություն կանոնադրություն մեջ չափազանց մանրակրկիտ տեղեկատվություն ներկայացնելու պահանջը ծանրաբեռնող պահանջ է համարվում, որը հիմնավորված չէ միջազգային իրավունքի շրջանակում: ⁸⁴ Հետևաբար, 8-րդ հոդվածի 5-րդ մասի (4)-րդ, (8)-րդ եւ (9)-րդ կետերում ներառված պահանջներին նման պահանջներին մասով Վենետիկի հանձնաժողովը եւ ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ը նախկինում նշել են, որ «օրենքը չպետք է պահանջի չափազանց մանրակրկիտ տեղեկատվության ներառում կրոնական կազմակերպություն կանոնադրության մեջ», եւ որ «բոլոր տեղեկությունները չտրամադրելու հիմքով գրանցումը մերժելը չպետք է օգտագործել որպես գրանցումը կամայականորեն մերժելու ձև»: ⁸⁵ Ընդհանուր առմամբ, «պետք է թողնել, որպեսզի կրոնական կազմակերպությունն ինքը որոշի, թե ինչպես է սահմանելու ներքին կանոնները»: ⁸⁶ Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումն այն է, որ «օրենսդրությունը պետք է պահանջել միայն այն, որ կրոնական համայնքը կարողանա պետական մարմիններին հետ շփումներին եւ իրավաբանական անձի գործառնություն կատարելու համար ունենալ ներկայացուցչական մարմին: Այլևս, կրոնական պաշտպանները հետ գործ ունեցող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար իրավական որոշակիությունը երաշխավորելու համար պետք է հստակեցնել, թե իրավաբանական անձի որ մարմիններն են իրավասու իր եւ անդամներին համար պարտադիր որոշումներ կայացնել»: ⁸⁷ Ուստի, Օրենքի նախագծի հեղինակներին առաջարկվում է դիտարկել Օրենքի նախագծի 8-րդ հոդվածից կրոնական (կամ համոզմունքային) կազմակերպության կանոնադրության կանոնադրության պահանջները հանելու նպատակն առաջարկելու նպատակով ներկայացում, կիրառելի դեպքում միայն սովոր կրոնական (կամ համոզմունքային) կազմակերպության նկատմամբ:

62. Թեպետ Օրենքի նախագծում նշվում են գրանցման ընթացակարգի որոշ տարրեր, գրանցման նորմերի չեզոք եւ անկողմնակալ կիրառությունը ընթացակարգային երաշխիքներ չեն նախատեսվում: Մասնավորապես, Լիազորմամբ համար չի սահմանվում դիմողներին լսելու կամ հարավոր մերժումը հիմնավորելու պարտավորություն: Օրենքի նախագծում այս մասով անհրաժեշտ է լրացում:

63. Օրենքի նախագծի 9-րդ հոդվածով նախատեսվում է, որ կրոնական կազմակերպության պետական գրանցումը մերժվում է «Իրավաբանական

⁸³ Տե՛ս էջատակի 7-րդ ծանոթագրությունը, պարբ. 31 (Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թ. ուղենիշներ):
⁸⁴ Նույն տեղը, պարբ. 25 (Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թ. ուղենիշներ):
⁸⁵ Տե՛ս էջատակի 3-րդ ծանոթագրությունը, պարբ. 66 (2011 թվականի համատեղ եզրակացություն):
⁸⁶ Վենետիկի հանձնաժողովը եւ ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ, համատեղ եզրակացություն Ադրբեյջանի Հանրապետության կրոնական համոզմունքային պատրաստության մասին օրենքի վերաբերյալ, ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 92-րդ լիազորմամբ նիստում (12-13 հոկտեմբեր, 2012 թ.), CDL-AD(2012)022, 15 հոկտեմբեր, 2012 թ., պարբ. 76, <[http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2012\)022-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2012)022-e)>:
⁸⁷ Տե՛ս էջատակի 71-րդ ծանոթագրությունը, պարբ. 71 (Կոստովոյի կրոնի պատրաստության մասին թիվ 02/L-31 օրենքում փոփոխություններն լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2014 թվականի եզրակացություն): [* «Կոստովոյի վերաբերյալ բոլոր նշումները՝ ներառյալ դրա տարածքի, կառույցների կամ բնակչության մասին նշումները, պետք է ամբողջովին ընկալել Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1244 բանաձևին համահունչ՝ բացառելով այդ նշումներին որևէ ազդեցությունը Կոստովոյի կարգավիճակի վրա»]:

անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումներին, հիմնարկներին և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայություն, ինչպես նաև սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կրոնական կազմակերպության գրանցման պահանջներին չբավարարելու դեպքում՝ երեսուրյամյա ժամկետում:⁸⁸ Նշված օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, «առեւ տրային կազմակերպության կանոնադրության անհամապատասխանությունն օրենքին հիմք է իրավաբանական անձի պետական գրանցումը մերժելու համար»: 36-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ, կրոնական կազմակերպության կանոնադրության անհամապատասխանությունն Օրենքի նախագծի 8-րդ հոդվածում թվարկված պահանջներին չպետք է ինքնին հիմք լինի պետական գրանցումը մերժելու համար:⁸⁹ Ավելին, 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գրանցման բովանդակության չկատարելը, ներառյալ սահմանափակման բովանդակության թվարկող 4-րդ հոդվածը չխախտելու պահանջը կատարելը, նշանակում է, որ ցանկացած թերություն կարող է պատժվել դիմումի մերժմամբ: Նման բացարձակ սահմանափակումն ըստ երեսուրյ թին անհրաժեշտ կամ համաչափ չէ, ուստի՝ այն պետք է համարել չնախագանց իր ստ միջամտություն կրոնի կամ համոզմունքի եւ միավորման ազատությանը,⁹⁰ հատկապես հաշվի առնելով իրավաբանական անձի կարգավիճակի կարեւորությունը կրոնական կամ համոզմունքային համայնքներին համար:

64. Ինչպես նշվել է Միավորումներին ազատության վերաբերյալ 2015 թվականի համատեղ ուղենիշներում, «գրանցումն օրենքի համաձայն չպետք է մերժվի բացառապես տեխնիկական բացթողումներին պատճառով, օրինակ՝ որոշակի փաստաթղթի կամ ստորագրության բացակայության հիմքով, փոխարենը դիմողներին պետք է սահմանված եւ ողջամիտ ժամկետ տրվի բացթողումները շտկելու համար՝ միեւնույն ժամանակ միավորմանը տեղեկացնելով պահանջվող բովանդակության փոփոխություններին եւ շտկումներին մասին: Շտկման համար դրվող ժամկետը պետք է ողջամիտ լինի, եւ միավորումը պետք է կարողանա աշարունակել գործելու պես ոչ ֆորմալ կառույց»:⁹¹

⁸⁸ 36-րդ հոդվածով նախատեսվում է. «1. 1. Իրավաբանական անձի գրանցումը մերժելու հիմքերն են՝

- 1) իրավաբանական անձի կազմավորման օրենքով սահմանված կարգի խախտումը.
- 2) սույն օրենքով կամ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը.
- 3) ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքի.
- 4) նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի դեկլարացիայի օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեության ամբողջական իրավունք գրկված և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելը.
- 5) ֆիրմային անվանման անհամապատասխանությունն օրենքով սահմանված պահանջներին, եթե ֆիրմային անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում.
- (6) ռեզումից չի ազատվում դիմել է այն պետության իրավաբանական անձ, որը նշված է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետություններին ցանկում, որոնց իրավաբանական անձինք չեն կարող ռեզումից չազատվել Հայաստանի Հանրապետության տարածքում:
- 2. Առևտրային կազմակերպության ներքին կանոնադրության անհամապատասխանությունն օրենքին հիմք է իրավաբանական անձի պետական գրանցումը մերժելու համար:
- 3. Իրավաբանական անձի գրանցումն այն ստեղծելու անհամապատասխանարության շարժառիթով մերժելն արգելվում է»:

⁸⁹ Տե՛ս էջատակի 3-րդ ծանոթագրությունը, պարբ. 67 (2011 թվականի համատեղ եզրակացություն):
⁹⁰ Տե՛ս, օրինակ, էջատակի 38-րդ ծանոթագրությունը, պարբ. 105 (ՄԻԵԴ, Metropolitan Church of Bessarabia-ը և այլքը նդդ. Մոլդովայի), պարբ. 52 և այլուր (ՄԻԵԴ, Gorzelik-ը և այլքը նդդ. Լեհաստանի), և պարբ. 31 և այլուր (ՄԻԵԴ, Sidirooulos-ը և այլքը նդդ. Հունաստանի):
⁹¹ Տե՛ս էջատակի 8-րդ ծանոթագրությունը, պարբ. 160 (2015 թվականի համատեղ ուղենիշները միավորումներին ազատության վերաբերյալ):

65. Հաշվի առնելով վերոգրյալը, **Օրենքի նախագծում այդ մասով անհրաժեշտ է լրացում նախատեսելով կրոնական (կամ համոզմունքային) համայնքների կողմից դիմումը լրամշակելու եւ քաղաքացիական շտաբի հնարավորությունը:**

66. Վերջապես, ինչպես իշխանությունները քաղաքացիական այցի ժամանակ, կրոնական կազմակերպության գրանցման մերժումը ենթակա է դատական կարգով բողոքարկման ընդհանուր դատավարական օրենսդրության համաձայն, որը սույն փորձաքննության շրջանակում ուսումնասիրության չի ենթարկվել:

2. Կրոնական կազմակերպության ներքին իրավունքները եւ սպարտավորությունները

67. Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ «կրոնական կազմակերպության ներքին նշանակությունը առատորպե ին իրավաբանական անձի կարգավիճակ»: Այդ առումով, ոչ ամբողջովին է պարզ, թե արդյոք կրոնական կազմակերպություններն առաջնորդվում են ոչ առեւտրային այլ կազմակերպության ներքին կատարման կիրառելի կանոններով, թե ոչ:

68. Օրենքի նախագծի 10-րդ հոդվածում թվարկվում են կրոնական կազմակերպության ներքին իրավունքները, եւ 16-րդ կետում նշվում են «օրենքով նախատեսված այլ իրավունքներ»: Կասկածելի է, որ կրոնական կազմակերպությունները պետք է օգտվեն միայն «օրենքով նախատեսված» այլ իրավունքներից, քանի որ օրենսդրության հնար է նախատեսել կրոնական համոզմունքների արտահայտման բոլոր հնարավոր ձևերը: Նախընտրելի կլիներ նախատեսել ոչ սպառիչ ցանկ թվարկելով հանդերձ որոշ կոնկրետ իրավունքներ, որոնք կրոնական կամ համոզմունքային կազմակերպություններն ունեն իրումն ոչ ֆորմալ (չգրանցված) կրոնական կամ համոզմունքային խմբերի կամ սովորական ոչ առեւտրային կազմակերպության ներքին ունեցած իրավունքներին (տե՛ս վերը՝ 33-րդ կետ):

69. Ավելին, կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքի որոշ կարեւոր տարրեր նշված չեն 10-րդ հոդվածում, օրինակ՝ **ներքին ինքնավարության իրավունքը եւ ինքնակառավարման իրավունքը**, հատկապես՝ կրոնական կազմակերպության առաջնորդների նշանակման հարցերում: **Խորհուրդ է տրվում համապատասխան լրացում կատարել 10-րդ հոդվածի 1-ին մասում:**

70. Օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, կրոնական կազմակերպության ներքին իրավունք ունեն «կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ իրենց առաջնություններում և դրանց պատկանող տարածքում, իրենց ու խոստովանողներում և դրանց համար նախատեսված այլ վայրերում, ինչպես նաև գերեզմանոցներում, հիվանդանոցներում, ծերանոցներում, ազատագրկման վայրերում, գործատուներում՝ այնտեղ գտնվող անձանց խնդրանքով և միայն նրանց համար հասանելի ձևով պահպանելով օրենսդրության պահանջները, մնացած դեպքերում՝ հրապարակապես ժամերգությունները, կրոնական ծեսերն ու արարողությունները կատարվում են հավաքների համար սահմանված կարգով» (ընդգծումը մերն է): 10-րդ հոդվածի 6-րդ կետից տպավորություն է առաջանում, որ որոշակի տարածքներից դուրս (ինչպես նաև դրանց ներսում՝ միայն օրենսդրության պահանջների պահպանմամբ) կատարվող ցանկացած կրոնական գործունեություն թույլատրված չէ, քաղաքացիական իրավունքի դաժնակալական արգելում է «հավաքներին

համար սահմանված կարգով»: Նախև առաջ, հասկանալի է, որ «*հավաքներին համար սահմանված կարգը*» պետք է կիրառելի լինի հանրային վարչերում իրականացվող հավաքներին կատարմամբ, սակայն չպետք է վերաբերի մասնավոր տարածքներին (կրոնական/համոզմունքային խմբին պատկանող կամ նրա վարձակալած տարածքներին) օգտագործմանը: Ավելին, պարզ է, թե արդյոք դրա համար անհրաժեշտ կլինի ծանուցել հանրային վարչում իրականացվող ցանկացած գործունեության մասին անկախ դրա փոքր լինելուց եւ հասարակական կարգը չխախտելու հանգամանքից, թե՛ դա չի տարածվի հրատապ կամ ինքնաբերական հավաքներին կատարմամբ: ⁹² Վեներիկի հանձնաժողովը եւ ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ը ցանկանում են շեշտել, որ հավաքներին բազմաթիվ տեսակներ ունենալու դեպքում, երբ դրանք պատկանում են անհատներին, հանրային վարչում իրականացվող ցանկացած գործունեությանը ընդհանուր միջոցներ ձեռնարկել հավաքի անցկացումն հանրավոր դարձնելու եւ հասարակական կարգը, հասարակական անվտանգությունը եւ այլոց իրավունքները եւ ազատությունները պաշտպանելու համար: ⁹³ Ցանկացած պարագայում, կրոնական (համոզմունքային) կազմակերպություններին կատարմամբ պետք է տարածվեն նույն պահանջները, ինչ խաղաղ հավաքներին բոլոր այլ կազմակերպիչներին կատարմամբ:

71. Օրենքի նախագծի 11-րդ հոդվածով նախատեսվում են կրոնական կազմակերպություններին պարտականությունները: Հարցն այն է, թե արդյոք այդ պարտականություններին չկատարումը կարող է առաջացնել Օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասի (1)-ին կետով նախատեսված պատժամիջոցները, այսինքն՝ հանդիսանալ «*օրենքի կոպիտ խախտում*»:

72. Օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի (2)-րդ կետով նախատեսվում է պարտականությունն՝ «*Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ Լիազորմամբ) պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել լիազորմամբ օրենքով սահմանված լիազորություններին իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր*»: Այս դրույթը չափազանց լայն է եւ չափազանց աղոտ, եւ չի պարունակում բավարարելիքներ կանխելու համար հանրավոր չարաչառության կամ ռստն ձգությունները (նմանատիպ օրենսդրության համար տեսվերը՝ 63-րդ կետը, Օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասի (9)-րդ կետով սահմանված պարտականության մասով): Ինչպես նշվել է Միավորումների ազատության վերաբերյալ 2015 թվականի ռեզոլյուցիայի 2-րդ կետում, միավորումների վերահսկողության եւ վերահսկման բոլոր կանոնակարգումներին եւ պրակտիկայի մեջ պետք է որպես ելակետ ընդունել միավորման գործունեությանը պետության նվազագույն միջամտության սկզբունքը: ⁹⁴ Երբ միավորումներից պահանջվում է տրամադրել փաստաթղթեր, *փաստաթղթերի տեսակները եւ թիվը պետք է սահմանված լինի, ողջամիտ լինի, եւ միավորումներին պետք է բավարար ժամանակ տրվի դրանք պատրաստելու համար*: ⁹⁵ Ավելին,

⁹² Տե՛ս Հավաքների ազատության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը (2011 թ.), առկա է համացանցում՝ <<http://www.legislationline.org/documents/action/popup/id/16523>>:
⁹³ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ն Վեներիկի հանձնաժողով, Խաղաղ հավաքներին ազատության ուղենիշներ (2010 թ., 2-րդ հրատարակ.), թիվ 4.1 ուղղորդիչ սկզբունք, <http://www.legislationline.org/download/action/download/id/3256/file/FoA_Guidelines_II_Edition_2010_en.pdf>:
⁹⁴ Տե՛ս էջատակի 8-րդ ծանոթագրությունը, պարբ. 228 (2015 թվականի համատեղ ուղենիշները միավորումների ազատության վերաբերյալ):
⁹⁵ Նույն տեղը, պարբ. 231 (2015 թվականի համատեղ ուղենիշները միավորումների ազատության վերաբերյալ): Տե՛ս նաև ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ, *Իրավապաշտպանների պաշտպանության ուղենիշներ* (2014 թ.), պարբ. 209, <<http://www.osce.org/odihr/119633>>:

օրենսդրությունը պետք է սպառնալից ցանկով հստակորեն սահմանել փաստաթղթեր ներկայացնելու հնարավոր պահանջների հիմքերը, որը չպետք է տեղի ունենա, բացառությամբ երբ սովորաբար օրենսդրության լուրջ խախտումների կատարված են, եւ այն էլ՝ միայն տվյալ կատարվածը փաստելու կամ հաստատելու նպատակով:⁹⁶ Խորհուրդ է տրվում համապատասխան լրացում կատարել Օրենքի նախագծում:

73. Վերջապես, 11-րդ հոդվածի 1-ին մասի (4)-րդ կետով նախատեսվում է նաև «օրենքով սահմանված այլ պարտականություն ունենալ» կատարելու մասին ընդհանուր նորմը: Օրենքի նախագծի 6-րդ գլխի հետ միասին ընթերցվելով՝ դա պետական մարմինների փաստացի անսահման արհեստական իրավունք է ընձեռում՝ կատարելու /լուծարելու կրոնական կազմակերպությունը օրենքի որեւիցե խախտում չվերացնելու հիմքով: Պետք է առնվազն համապատասխան երաշխավորել օրենքի խախտման եւ կիրառվող պատժի միջոց (կատարման եւ լուծարման մասով տեւս նաև ստորեւ՝ «H (5)» բաժնի):

74. Օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, «կրոնական կազմակերպությունները չեն կարող ֆինանսավորվել կուսակցությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող իրենց հոգևոր կենտրոնների կողմից և ֆինանսավորել նրանց»: ՄԻԵԴ-ն իր վճիռներում նշել է, որ «եկեղեցիների կամ կրոնների ֆինանսավորումը կարգավորող համաձայնագրային ստանդարտ չկա, և այս հարցերը սերտորեն կապված են յուրաքանչյուր պետության պատմության և ավանդույթների հետ... և որ այս առումով Պայմանավորվող պետություններին թույլված հայեցողություն սահմանը փաստորեն լայն է»:⁹⁷ Թեպետ պետությունները կարող են տարբեր իրավաչափ պատճառներ ունենալ տարբեր տեսակի միջոցների փոխանցումները կարգավորելու համար,⁹⁸ հարկ է վերհիշել, որ ԵԱՀԿ-ի բոլոր մասնակից պետությունները պարտավորվել են հարգել «կամավոր ֆինանսական և այլ հանգանակություններ հայցելու և ստանալու» կրոնական կազմակերպությունների իրավունքը,⁹⁹ և որ այդ իրավունքը պետք է իրացնել առանց որևէ անհարկի սահմանափակման:¹⁰⁰ ԵԱՀԿ-ի շրջանակում ստանձնված հանձնառությունները նույնպես հաստատում են, որ կարևոր է, որպեսզի կրոնական կազմակերպություններն հնարավորություն ունենան՝ ստեղծելու և պահպանելու կապեր այլ պետությունների հավատացյալների, կրոնական հավատների և նրանց ներկայացուցիչների հետ:¹⁰¹ Կրոնի կամ համոզմունքի ազատության վերաբերյալ 2004 թվականի ուղենիշների մեջ նշվում է, որ «թեպետ պետությունը կարող է նախատեսել որոշ սահմանափակումներ, նախընտրելի մոտեցումն է միավորումներին թույլ տալ, որպեսզի նրանք միջոցներ հայթայթեն՝ պայմանով, որ նրանք չխախտեն պետական

⁹⁶ Նույն տեղը, պարբ. 231 (2015 թվականի համատեղ ուղենիշները միավորումների ազատության վերաբերյալ):
⁹⁷ ՄԻԵԴ, *Klein-ը և այլք ընդդ. Գերմանիայի* (զանգարան երթիվ 10138/11 և 3 այլք, դատավճիռը՝ 6 ապրիլ, 2017 թ.), պարբ. 87, <<http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-172553>>:
⁹⁸ Տես էջատակի 3-րդ ծանոթագրությունը, պարբ. 76 (2011 թվականի համատեղ եզրակացություն): Տես նաև էջատակի 6-րդ ծանոթագրությունը, Մաս II.H (Կրոնի կամ համոզմունքի ազատության վերաբերյալ 2004 թ. ուղենիշներ):
⁹⁹ ԵԱՀԿ, *Երրորդ հերթական հանդիպման ավարտական փաստաթուղթ* (Վիեննա, 4 նոյեմբեր 1986 թ. մինչև 19 հունվար 1989 թ.), սկզբում 16.4, <<http://www.osce.org/mc/40881>>:
¹⁰⁰ Նույն տեղը, սկզբում 16.4 (1989 թվականի Վիեննայի փաստաթուղթ):
¹⁰¹ Նույն տեղը, պարբ. 32 (1989 թվականի Վիեննայի փաստաթուղթ), որով նախատեսվում է, որ ԵԱՀԿ-ի մասնակից պետությունները «հավատացյալներին, կրոնական հավատներին և նրանց ներկայացուցիչներին թույլ կտան անհատապես կամ խմբով ստեղծել և ունենալ անձնական ուղղակի շփումներ և հաղորդակցություն միմյանց հետ՝ թե՛ սեփական երկրում, թե՛ այլ պետություններում»:

այլ կարևոր քաղաքական թյուրիմացություններ», և որ «օրենքները պետք է չսխալվեն և ակնհայտ խտրական թյուրիմացություններ»:¹⁰²

75. Հաշվի առնելով վերոգրյալը, թեպետ օտարերկրյա ֆինանսավարման մասին հաշվետվությունները ներկայացնելու կամ տեղեկություններ քննարկելու պահանջները կարող են հետապնդել իրավաչափ և պատակներ, օրինակ՝ փողերի լվացման և ախտահարման կազմակերպությունների ֆինանսավարման դեմ պայքարը, արտերկրում գտնվող հոգևոր կենտրոնների կողմից ֆինանսավարմություն և նրանց ֆինանսավարմությունը քաղաքացիները ստերեոտիպներին չի կարողանա հրաժեշտ լինել կամ համապատասխան լինել նշված և պատակի իրականացմանը: Ուստի, **հարկ է վերանայել 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված օտարերկրյա ֆինանսավարման քաղաքացիները:**

3. Կրոնական կազմակերպությունների հաշվետվական սխալատվությունները

76. Օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի (3)-րդ կետով կրոնական կազմակերպություններից պահանջվում է օրենքով նախատեսված կարգով հրատարակել հաշվետվություններ: 13-րդ հոդվածի 2-րդ մասում մանրամասնեցվում է այդ հաշվետվություններին բովանդակությունը, որոնք պետք է, ի թիվս այլոց, տեղեկություններ պարունակեն հանրային միջոցառումներին, հրատարակումներին, դասընթացներին մասին ելույթներ (13-րդ հոդվածի 2-րդ մասի (4)-րդ կետ): Պարզ չէ, թե ինչպես պատճառով է այդ տեղեկատվությունն անհրաժեշտ իշխանություններին: Ավելին, նման մանրակրկիտ տեղեկությունները ներկայացնելու պահանջը չափազանց ծանրաբեռնող կլինի՝ հատկապես խոշոր ելակտիվ կազմակերպությունների համար: Կասկածելի է, թե այդ տեղեկատվության մասին հաշվետվություններին ներկայացումը կարող է անհրաժեշտ լինել ժողովրդավարական հասարակությունում՝ ՄԵԿ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված իրավաչափ և պատակներին հասնելու համար: Եթե կրոնական կազմակերպությունն զբաղվում է անօրինական գործունեությամբ, պետական իրավասու մարմինները պետք է կանխեն եւ պատժեն նման գործունեությունը: **Խորհուրդ է տրվում Օրենքի նախագծից հանել 13-րդ հոդվածի 2-րդ մասի (4)-րդ կետը՝ փոխարենը պահանջելով միայն կրոնական կազմակերպության գործունեության մասին գուտ վիճակագրական տեղեկություններին եւ ֆինանսական արդյունքներին մասին տեղեկություններին հրատարակում:**

77. Ընդհանուր առմամբ էլ, Օրենքի նախագծի 13-րդ հոդվածում թվարկված որոշ այլ պահանջները ստերեոտիպներն անհարկորեն ծանրաբեռնող են: Օրինակ, պարզ չէ, թե ինչու է պետությունն անհրաժեշտ տեղեկատվությունն դրամական միջոցներին և այլ գույքի օգտագործման, կանոնադրական և պատակներին ուղղված ծախսերի մասին: Ավելին, այդ դրույթները շատ ավելին են պահանջում, քան իրավաբանական անձի կարգավիճակը կարգավորող նորմերը եւ ոչ կրոնական կազմակերպություններին հաշվետվություններին վերաբերյալ «Հասարակական կազմակերպություններին» օրենքով նախատեսված դրույթները,¹⁰³ որոնցով ընդամենը

¹⁰² Տե՛ս էջատակի 6-րդ ծանոթագրությունը, Մաս II.Ճ, էջ 20 (Կրոնի կամ համոզմունքի ազատություն և վերաբերյալ 2004 թ. ուղեկիշներ):
¹⁰³ Տե՛ս Հասարակական կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի (7)-րդ կետը, ՀՕ-22-Ն, ուժի մեջ է մտել 2017 թվականի փետրվարի 4-ին, <http://www.legislationline.org/download/action/download/id/7180/file/Armenia_law_on_ngos_2016_en.pdf>:

պահանջվում է նրանց գործունեության եւ գույքի տնօրինման մասին տարեկան հաշվետվություն ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը: Եթե չտրվի լրացուցիչ հիմնավորում, ապա **Օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվող հաշվետվություն քվանդակությանը ներկայացվող պահանջներն ըստ երեւոյթին ինդրահարույց են եւ դրանք պետք է վերանայել եւ պարզեցնել՝** համապատասխանեցնելով ՀԿ-ների նկատմամբ կիրառելի ընդհանուր պահանջներին:

4. Պետության եւ կրոնական կազմակերպության ներքին հարաբերությունները (հոդված 12)

78. Օրենքի նախագծի 12-րդ հոդվածով կարգավորվում են պետության եւ կրոնական կազմակերպության ներքին հարաբերությունները: Սահմանվում է, մասնավորապես, որ պետությունն արգելում է կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որևէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեություն, եւ արգելում է կրոնական կազմակերպության մասնակցությունը պետական կառավարմանը, նրանց չի կարող պատվիրակել պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի որևէ գործառույթ: Այն դրույթը, որով պետությունն արգելում է կրոնական կամ համոզմունքային կազմակերպության ներքին կառուցվածքում որևէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեություն, կարծես չափազանց ընդգրկուն է, անգամ եթե ցանկացած քաղաքացիական ծառայողի արգելում է որեւիցե պաշտոն զբաղեցնել կրոնական կամ համոզմունքային համայնքում, որի անդամ է նաեւ, կամ՝ եթե դա նշանակում է, որ հավատացյալները չեն կարող դառնալ պետական պաշտոնյա: Քաղաքացիական ծառայողների որոշ մասնակցություն իրենց կրոնական (կամ համոզմունքային) համայնքի կյանքին պետք է հնարավոր լինի, եւ **անհամատեղելիությունները պետք է վերաբերեն միայն դեկավար պաշտոններին կամ այլ պաշտոններին, որոնք կարող են հակասել պետական պարտականություններին եւ/կամ վտանգել տվյալ պետական պաշտոնյաների չեզոքությունը:**¹⁰⁴ Խորհուրդ է տրվում համապատասխան փոփոխություն կատարել **12-րդ հոդվածում:**

5. Կրոնական կազմակերպության կասեցումը եւ լուծարումը

79. Օրենքի նախագծի 6-րդ հոդվածը վերաբերում է կրոնական կազմակերպությունների կասեցմանը եւ լուծարմանը: Ինչպես նշվում է Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թվականի համատեղ ուղենիշներում, համաչափության սկզբունքը պահպանելու համար «*օրենսդրության հրաժեշտ է նախատեսել մի շարք ավելի մեղմ պատիժներ, օրինակ՝ նախագուշացում, տուգանք կամ հարկային արտոնություններինց զրկում, որոնք կախված խախտման ծանրությունից՝ պետք է կիրառվեն նախքան իրավաբանական անձի կարգավիճակից զրկելը*»:¹⁰⁵ Դա վերաբերում է նաեւ այլ պատիժներին, մասնավորապես կասեցմանը կամ լուծարմանը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, **Օրենքի նախագծի 6-րդ գլխում անհրաժեշտ է լրացում կատարել՝ ներառելով նախագուշացումներին համակարգ, որը թույլ**

¹⁰⁴ Տե՛ս էջատակի 8-րդ ծանոթագրությունը, պարբ. 144 (2015 թվականի համատեղ ուղենիշները միավորումներին ազատության վերաբերյալ):
¹⁰⁵ Տե՛ս էջատակի 7-րդ ծանոթագրությունը, պարբ. 33-34 (Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թ. ուղենիշներ):

կտա շտկել խախտումը կամ բացթողումը,¹⁰⁶ ինչպես նաև՝ ավելի աստիճանակալ պատիժներ, որոնք պետք է կիրառվեն նախքան կատեգորիալ կամ լուծարման պատժատեսակը կիրառելը, կամ որպես այլընտրանք՝ Օրենքի նախագծում հղումներ առաջարկվում են հարաբերական աստիճանակալ պատիժները սահմանող համապատասխան օրենքին: Միեւնույն ժամանակ, եւ ինչպես արդեն իսկ նշվել է 2011 թվականի համատեղ եզրակացություն մեջ, Օրենքի նախագծում անհրաժեշտ է մանրամասնել Օրենքի նախագծի խախտումներին այն տեսակները, որոնք կարող են առաջացնել նման տարբեր տեսակի պատժամիջոցներ, միեւնույն ժամանակ առավել ճշգրիտ կերպով սահմանելով լիազոր մարմնի կողմից կիրառվող ընթացակարգերը եւ ժամկետները:¹⁰⁷

80. Օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասի (1)-ին կետով նախատեսվում է, որ «օրենքի կոպիտ խախտում» է «յի ազոր մարմնի կողմից սահմանված կարգով եւ ժամկետներում հայտնաբերված խախտումները չվերացնելը» կրոնական կազմակերպության կողմից: Նմանապես, 14-րդ հոդվածի 4-րդ մասով որպես «էական խախտում» է նախատեսվում «կրոնական կազմակերպության հիմնադրման ժամանակ տեղի ունեցած այնպիսի խախտումը, որը եթե հայտնի լիներ հիմնադրման կամ պետական գրանցման պահին, սպա կազմակերպությանը չէր հիմնադրվի կամ չէր գրանցվի»: Բոլոր այս դեպքերում դատարանը կարող է կատեգորիալ կրոնական կազմակերպության գործունեությունը ոչ ավելի, քան մեկ տարով (14-րդ հոդվածի 5-րդ մաս), կամ՝ մինչեւ Լիազոր մարմնի կամ կրոնական կազմակերպության կողմից կրոնական կազմակերպության գործունեության կատեգորիալ վերացված լինելու վերաբերյալ սպաացույցներ ներկայացնելը (14-րդ հոդվածի 6-րդ մաս):

81. Այդ դրույթները նախատեսվում են «հայտնաբերված խախտումները չվերացնելու» եւ «կրոնական կազմակերպության հիմնադրման ժամանակ տեղի ունեցած» խախտումներին անկախ խախտման բնույթից եւ ծանրությունից: Դա կարող է ներառել անգամ չնչին խախտումները, օրինակ՝ նոր հասցեն ժամանակին չհայտնելը, տուգանքը սահմանված վճարում չվճարելը եւ այլն: Ինչպես նշվում է Միավորման ազատության վերաբերյալ համատեղ ուղենիշներում, «միավորման գործունեության ցանկացած կատեգորիալ կարող է ... հիմնավորվել միայն ժողովրդավարության համար տվյալ միավորման առաջացրած վտանգով, եւ պետք է հիմնված լինի դատական որոշման վրա կամ իրականացվի դատական վերանայումից հետո միայն:¹⁰⁸ Օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասն հարկ է վերանայել: Խորհուրդ է տրվում առավել հստակորեն թվարկել այն սահմանափակ դեպքերը, որոնցում կատեգորիալ հնարավոր է,¹⁰⁹ միջազգային ստանդարտներին համահունչ, եւ ուղղակիորեն ամրագրել, որ այդ դրույթները կիրառելիս պետք է պահպանել համաչափության սկզբունքը:

¹⁰⁶ Տե՛ս էջատակի 8-րդ ծանոթագրությունը, պարբ. 238 (2015 թվականի համատեղ ուղենիշները միավորումների ազատության վերաբերյալ):
¹⁰⁷ Տե՛ս էջատակի 3-րդ ծանոթագրությունը, պարբ. 84 (2011 թվականի համատեղ եզրակացություն):
¹⁰⁸ Տե՛ս էջատակի 8-րդ ծանոթագրությունը, պարբ. 255 (2015 թվականի համատեղ ուղենիշները միավորումների ազատության վերաբերյալ):
¹⁰⁹ Տե՛ս, *mutatis mutandis*, ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի Վեներտիկի հանձնաժողով, *Համատեղ եզրակացությունն Քաղաքական կուսակցությունների մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ*, CDL-AD(2016)038, պարբ. 51, <[http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)038-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)038-e)>, որում նշվում է. «Քաղաքական կուսակցության գործունեության կատեգորիալ առանձնակի լրջություն միջամտություն է և բացառիկ միջոց, որը պետք է կիրառել միայն ամենածանր դեպքերում, որոնցում առկա են նվիրատվությունների կամ հաշվետվությունների մասին կանոնների առանձնապես ծանր խախտումներ, եթե հիմնավորվել է, որ նվազ միջամտողական միջոցառումներն անարդյունավետ են»:

82. Ավելի ին, 14-րդ հոդվածում նշինչ չի ասվում Լիազոր մարմնի որոշման օրինակնուն թյունը եւ հիմնավորված թյունը վիճարկելու հնարավորութան մասին: «Կոպիտ խախտում» պէտք է համարվի միայն Լիազոր մարմնի այն *օրինակնուն* որոշումը չկատարելը, որը չի վիճարկվել որոշակի ժամկետում կամ որը հաստատվել է դատարանի կողմից: Ցանկացած պարագայում, կատարումը չպէտք է ազդի այն իրավունքներին վրա, որոնցից օգտվում են կրոնական կամ համոզմունքային բոլոր խմբերը ներառյալ ոչ ֆորմալ եւ չգրանցված խմբերը (տե՛ս վերը 33-րդ կետը): **Կատարումն հետեւանքները պէտք է ըստ այդմ հստակեցվեն Օրենքի նախագծում:**

83. Օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, կրոնական կազմակերպությունը կարող է լուծարվել, եթե (1) կրոնական կազմակերպության կողմից թույլ են տրվել օրենքների պահանջների այնպիսի կոպիտ կամ պարբերաբար խախտումներ, որոնք չեն կարող վերացվել կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումներով, 2) կրոնական կազմակերպության կողմից մեկ տարվա ընթացքում կրկին կատարվել են սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտումները, 3) կազմակերպության գործունեությունը սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով կատարվել է կազմակերպության գործունեության վերսկսումը թույլատրելու մասին դատական ակտ չի կայացվել կամ լրացել է սույն օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետը, 4) կրոնական կազմակերպության գրանցումից հետո ի հայտ են եկել սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված խճի և կրոնի ազատության արտահայտման սահմանափակման հիմքերը:

84. Օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասի (1)-ին կետով նախատեսվում է, որ Արդարադատության նախարարությունը՝ որպես Լիազոր մարմնի, կարող է կրոնական կազմակերպությունը լուծարելու դիմում ներկայացնել դատարան, եթե *«կրոնական կազմակերպության կողմից թույլ են տրվել օրենքների պահանջների այնպիսի կոպիտ կամ պարբերաբար խախտումներ, որոնք չեն կարող վերացվել կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումներով»:* Ողջունելի է, որ Օրենքի նախագծում այժմ խստվում է «կոպիտ կամ պարբերական» խախտումների մասին՝ Օրենքի նախագծի 2017 թվականի ավելի վաղ տարբերակի համեմատությամբ, որը փորձաքննվել էր ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի կողմից 2017 թվականի եզրակացությունում մեջ. այս կերպ, Նախագիծը ենթադրաբար ընդգրկում է միայն այն դեպքերը, որոնցում խախտումների ծանրությունը հիմնավորում է նման պատիժը:¹¹⁰ Միեւնույն ժամանակ, այդ եզրույթները սահմանված չեն Օրենքի նախագծով: Պարզ չէ, թե արդյոք «կոպիտ խախտում» եզրույթն Օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասի (1)-ին կետի իմաստով նույնն է, ինչ «կոպիտ խախտում» եզրույթն Օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասի (1)-ին կետում, բացառությամբ այն փաստի, որ առաջինը համարվում է անշտկելի: Եթե իսկապես այդպես է, ապա կիրառելի է դրույթի լայն եւ աղոտ շրջանակին առնչվող միեւնույն՝ վերոհիշյալ 83-րդ կետում հայտնած մտահոգությունը, եւ խորհուրդ է տրվում վերանայել այս նորմը եւ ավելի կոնկրետ իմաստով սահմանել, թե Օրենքի նախագծի որ «կոպիտ խախտում» կարող է հանգեցնել լուծարման:

85. Ավելի ին, այս դրույթից պարզ չէ, թե որ հանգամանքներում է կրոնական կազմակերպությունը որպես այդպիսին պատասխանատու համարվում լուծարման հիմք հանդիսացող հնարավոր խախտումը

¹¹⁰ Տե՛ս էջատակի 1-ին ծանոթագրությունը, պարբ. 80 (ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի 2017 թվականի եզրակացությունն):

կատարելու համար: Ինչպես նշվեց վերը՝ 51-րդ կետում, անհատ առջնորդները եւ անդամները խախտումները չպետք է վերագրվեն կրոնական կամ համոզմունքային համայնքին, այլ ընդամենը քրեական, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն առջացնեն անձամբ նրանց համար: Այլապես, դա կլինի երկու կողմի վատաբերությունը համայնքին կատարմամբ առանձին անհատներին վերագրվող արարքների համար:

86. Ավելին, Օրենքի նախագծի 15-րդ հոդվածից կարծես բխում է, որ օրինական կարգին հակասող գրեթե ցանկացած գործողություններ առկա համեմատաբար մանր խախտումները, կարող են հանգեցնել կրոնական կազմակերպության լուծարմանը: Այս դրույթի շրջանակն այնքան լայն է, որ այն չի համապատասխանում համաչափության սկզբունքին եւ չի կարող անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում: Կրոնական (կամ համոզմունքային) կազմակերպության լուծարման/արգելման համար պահանջվող չափանիշն այն է, որ պետք է լինեն ծանր եւ կրկնվող խախտումներ, արդյունավետորեն չեն կարող կիրառվել որեւէ այլ պատիժներ, եւ ընդհանուր առմամբ տվյալ միջոցն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում եւ համաչափ է իրավաչափ նպատակին հասնելու համար:¹¹¹ Դրույթի ներկայիս ձեւակերպումը չի համապատասխանում համաչափության սկզբունքին, քանի որ նախատեսում ամենածանր խախտվող գործելու արգելքը, Օրենքի նախագծի 4-րդ հոդվածում նախատեսված ցանկացած խախտման համար: Ինչպես նշվում է Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թվականի համատեղ ուղեւիշներում, «*հաշվի առնելով այն ընդգրկուն է ծանր հետեւ անքննելը, որոնք կրոնական կամ համոզմունքային կազմակերպության իրավաբանական անձի կարգավիճակից զրկելը կարող է ունենալ նրա կարգավիճակի, ֆինանսավորման եւ գործունեության համար, ցանկացած նման որոշում պետք է կայացնել, եթե բոլոր այն հնարավոր միջոցները սպառվել են*»: Այս համատեքստում հարկ է նշել, որ Օրենքի նախագծից 2011 թվականի տարբերակի համեմատ հանվել է նորմնայն մասին, որ կազմակերպության լուծարումը պետք է լինի հնարավոր միջոցներից վերջինը երբ մյուսներն արդեն սպառվել են:¹¹² Այդ հոդվածով նախատեսվում էր, որ լուծարումը թույլատրելի է միայն այն դեպքում, «*երբ խախտումը վերացնելու կամ կանխելու այլ միջոցները սպառվել են, կամ խախտումները հնարավոր չէ վերացնել այլ կերպ*»: Հաշվի առնելով այս երաշխիքի կարեւորությունը լուծարման որոշումներին համաչափության նախահովելու տեսակետից, **խորհուրդ է տրվում նման ձեւակերպում կրկին ներառել Օրենքի նախագծում:**

87. Հաշվի առնելով վերոգրյալը, Օրենքի նախագծում անհրաժեշտ է ավելի հստակորեն սահմանել Օրենքի նախագծի այն խախտումները, որոնք կարող են հանգեցնել լուծարման, լուծարման համար ներկայացվող նվազագույն շեմը պետք է շատ ավելի բարձր սահմանվի, եւ պետք է ներառել նաեւ նախագուշացումների եւ ավելի սուտիճանական պատիժների համակարգ, որոնք կարելի կլինի կիրառել նախքան լուծարման պատիժ կիրառելը միեւնույն ժամանակ ուղղակիորեն ամրագրելով, որ այդ դրույթները կիրառելիս պետք է հարգել համաչափության սկզբունքը:

¹¹¹ Տե՛ս էջատակի 2-րդ ծանոթագրությունը, պարբ. 99 (2010 թվականի միջանկյալ համատեղ եզրակացություն): Տե՛ս նաև էջատակի 86-րդ ծանոթագրությունը, պարբ. 92 (Վեներտիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ, 2012 թվականի համատեղ եզրակացություն Ադրբեյջանի Հանրապետության կրոնական համոզմունքի ազատության մասին օրենքի վերաբերյալ):
¹¹² Տե՛ս էջատակի 3-րդ ծանոթագրությունը, պարբ. 86 (2011 թվականի համատեղ եզրակացություն):

88. Եվ վերջ ապես, ինչպես իշխանությունները բացատրեցին այցի ընթացքում, հասկանալի է, որ կրոնական կազմակերպություններն ունեն իրավական պաշտպանություն արդյունավետ միջոցներ՝ վիճարկելու համար Օրենքի նախագծի համաձայն կիրառվող պատժամիջոցները, ներառյալ ավելի բարձր ասոյանի դատարան բողոքարկելու իրավունքը, որոնք նախատեսված են համապատասխան դատավարական օրենսդրությամբ, որը սույն փորձաքննության շրջանակում ուսումնասիրության ենթակաչ է:

6. Անցումային դրույթները եւ որպես կրոնական կազմակերպություն վերազրանցվելու պարտավորությունը

89. Եզրափակից եւ անցումային դրույթներով նախատեսվում է, որ «սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում կրոնական կազմակերպությունները պարտավոր են իրենց կանոնադրությունները համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին»: Դա կարծես համեմատաբար խելամիտ ժամկետ է Օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները բավարարելու համար: Միեւնույն ժամանակ, անցումային դրույթները չպետք է մեկնաբանել որպես գործող կրոնական կազմակերպությունների վերազրանցման փաստացի պահանջ: Այն դեպքում, երբ ներդրվում են կրոնական կամ համոզմունքային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող նոր նորմեր, անցումային համարժեք կանոններով պետք է երաշխավորել գոյություն ունեցող համայնքների իրավունքները՝ չպահանջելով իրավաբանական անձի կարգավիճակի ստանալու համար կրկին դիմել սահմանված նոր չափանիշներին հիմնված վրա, բացառությամբ երբ պետությունը կարող է հիմնավորել, որ այդ սահմանափակումներն անհրաժեշտ են եւ համաչափ են հետապնդվող իրավաչափ նպատակին:¹¹³ Ուստի, նոր պահանջները (ներառյալ անդամների նվազագույն թվի պահանջը) չպետք է կիրառել լինեն արդեն գոյություն ունեցող կրոնական կազմակերպությունների նկատմամբ, եւ պետք է գործի ուժեղ կանխավարկած սաայն, որ գոյություն ունեցող կրոնական կազմակերպությունները համապատասխանում են նոր օրենքի դրույթներին: **Դա պետք է հստակեցնել Օրենքի նախագծում:**

I. Կրոնական կազմակերպությունների գործունեության վերահսկողությունը

90. Օրենքի նախագծի 16-րդ հոդվածով նախատեսվում է նաև Լիազորմամբ կողմից վերահսկողության որոշ ձեւեր՝ կրոնական կազմակերպությունների կողմից օրենքի խախտմամբ իրականացվող գործունեության մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձանց բողոքները ստանալու դեպքում (16-րդ հոդվածի 1-ին մասի (1)-ին կետ), կամ երբ «պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ներկայացվել է հաղորդում անձի կամ կրոնական կազմակերպության կողմից թույլ տրված խախտման վերաբերյալ» (16-րդ հոդվածի 1-ին մասի (2)-րդ կետ), կամ երբ «կրոնական կազմակերպության կողմից հրապարակված հաշվետվությունում առկա է տեղեկատվություն օրենքի պահանջներին խախտումների վերաբերյալ» (16-րդ հոդվածի 1-ին մասի (3)-րդ կետ):

¹¹³ Տե՛ս էջ առակի 7-րդ ծանոթագրությունը, պարբ. 36 (Իրավաբանական անձի կարգավիճակի վերաբերյալ 2014 թ. ուղեկիշներ):

91. Նախեւ առաջ, պարզ չէ, թե ինչնու է 16-րդ հոդվածի 1-ին մասի (2)-րդ կետում նշվում անձի կողմից թույլ տրված խախտման մասին, քանի որ դա կարող է նշանակել կրոնական կազմակերպության առջնորդի կամ նրա անդամներից մեկի կատարած խախտումները: Ինչպես նշվեց վերը՝ 51-րդ կետում, անհատ առջնորդների կամ անդամների խախտումները չպետք է ուղղակիորեն վերագրվեն կրոնական կամ համոզմունքային համայնքին, բացառությամբ երբ դրանք վերագրելի են կազմակերպությանը, այսինքն՝ երբ դրանք առաջնորդների հրամանների ուղղակի հետևանք են, կամ ուղղակիորեն նախատեսված են կրոնական կամ համոզմունքային կազմակերպության ուսմունքով, համոզմունքով կամ ուսուցմամբ, և նրա առաջնորդները խրախուսում կամ հանդուրժում են նման անօրինական պրակտիկան: Ցանկացի կյանքի պատեղ փոխաբերել նշել «կրոնական կազմակերպության ներկայացուցիչ» մասին:

92. Երկրորդը, 16-րդ հոդվածում քիչ են տեղեկություններն այդ շրջանակում կրոնական կազմակերպության, դատավարական իրավունքների վերաբերյալ: Ինչպես նշվեց վերը՝ 81-րդ կետում, եւ ինչպես խորհուրդ էր տրվել 2011 թվականի Համատեղ եզրակացության մեջ,¹¹⁴ կրոնական կազմակերպությունների համար պետք է նախատեսվեն նոր ջանքեր և ժամկետներ հայտնաբերված խախտումները վերացնելու համար, եւ այդ մասով անհրաժեշտ է լրացում կատարել Օրենքի նախագծում: Ավելին, պարզ չէ, թե արդյոք որոշ պատիժներ կարող են կիրառվել ուղղակիորեն Լիազորմարմինի կողմից, թե իրավասու մարմին որոշմամբ, թե արդյոք այդ իրավասու մարմինը դատարանն է թե այլ մարմին: **Դա անհրաժեշտ է հստակեցնել Օրենքի նախագծում:**

93. Օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է նրան, որ Լիազորմարմինը կարող է «*դիմել իրավասու մարմինին իր կողմից մտնան նշած հարցերի վերաբերյալ եզրակացություն ստանալու համար*»: Պարզ չէ, թե որ մարմինն է այդ առումով իրավասու մարմինը, եւ թե ինչ հարցերով կարող է նրա եզրակացությունը դիմել Լիազորմարմինը: Ինչպես նշվեց վերը՝ 57-րդ եւ 59-րդ կետերում, կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքը եւ արտահայտվելու ազատության իրավունքը չեն ենթադրում, որ պետությունը պետք է հայեցողություն ունենա որոշելու, թե արդյոք այդ համոզմունքները կամ դրանց արտահայտման համար կիրառվող միջոցներն իրավաչափ են: ¹¹⁵ Ուստի, նման եզրակացությունը չի կարող վերաբերել համոզմունքի եւ/կամ գործունեության իրավաչափությանը:

J. Առաջարկություններ Օրենքի նախագծի պատրաստման եւ ընդունման գործընթացի վերաբերյալ

94. Վերջապես, հասկանալի է, որ Արդարադատության նախարարն անցկացրել է հանրային քննարկումներ թե համացանցում,¹¹⁶ թե հանդիպումների միջոցով Օրենքի նախագծի 2017 թվականի նախորդ տարբերակը պատրաստելիս, որը փորձաքննվել էր ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի կողմից,

¹¹⁴ Տե՛ս էջատակի 3-րդ ծանոթագրությունը, պարբ. 7, Հանձնարարական R (2011 թվականի համատեղ եզրակացություն):
¹¹⁵ Տե՛ս էջատակի **Error! Bookmark not defined.**-րդ ծանոթագրությունը, պարբ. 60 (ԵԱՀԿ/ԺՀ ՄԻԳ-ի 2009 թվականի մեկնաբանությունները Ղազախստանի կրոնական ազատության և կրոնական կազմակերպությունների իրավական դաշտում փոփոխությունների նախագծի վերաբերյալ):
¹¹⁶ Օրենքի նախագիծը համացանցային քննարկումների առարկա էր երկու ամիս 2017 թվականի հունիսի 1-ից մինչև 2017 թվականի հունիսի 31-ը, տե՛ս <<https://www.e-draft.am/projects/246>>:

եւ դրանց անցկացումը ողջունելի է: Իրավունքի գերակայության ստուգաթերթում Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ հանրությունը պետք է ունենա օրինաստեղծ գործընթացին «մասնակցություն բերելու իմաստավորված հնարավորություն»: ¹¹⁷ Վենետիկի հանձնաժողովը մի շարք եզրակացություններում կոչ է արել նաև «նախապես պատշաճ կերպով տեղեկացնել և ծանուցել օրինագծի վերաբերյալ խորհրդակցելով շահագրգիռ բոլոր կողմերի հետ»: ¹¹⁸ ԵԱՀԿ-ի շրջանակում ստանձնած հանձնառությունները պահանջում են, որպեսզի օրենսդրությունն ընդունվի՝ «բաց գործընթացի արդյունքում արտացոլելով ժողովրդի կամքը կամ անմիջականորեն, կամ նրանց ընտրած ներկայացուցիչների միջոցով»: ¹¹⁹ Օրենքի նախագծի 2017 թվականի տարբերակի վերաբերյալ համացանցում ստացված բոլոր մեկնաբանություններն հրապարակվել են Արդարադատության նախարարության կայքէջում, ¹²⁰ որտեղ նշվել է նաև, թե որքանով են հաշվի առնվել եւ Օրենքի նախագծի վերանայված տարբերակում արտացոլվել ստացված այդ մեկնաբանությունները: ¹²¹ Դա ողջունելի զարգացում է, որը լավ արակտիկայի արտացոլում է: Միեւնույն ժամանակ, պարզ չէ, թե արդյոք նույն արվել է հանդիպումների ընթացքում ստացված մեկնաբանությունների եւ առաջարկությունների մասով:

95. Հայաստանի օրենսդրին կոչ է արվում օրինաստեղծ գործընթացի բոլոր փուլերում ընդհուպ մինչեւ ընդունումը, շարունակել Օրենքի նախագծի ներառական, ընդգրկուն և արդյունավետ քննարկումները, այդ թվում՝ կրոնական կամ համոզմունքային տարբեր համայնքների ներկայացուցիչների հետ:

* * *

¹¹⁷ Տե՛ս CDL-AD(2016)007, պարբ. 50 (էջ 13):
¹¹⁸ Տե՛ս CDL-AD(2017)022, Հունգարիա, եզրակացությունն Ազգային երրորդային կրթության մասին 2011 թվականի թիվ CCIV օրենքում փոփոխություններին XXV հոդվածի վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 4-ի եզրակացություն, պարբ. 55:
¹¹⁹ Տե՛ս 1991 թվականի Մոսկվայի փաստաթղթեր, պարբ. 18.1:
¹²⁰ Տե՛ս <<https://www.e-draft.am/projects/246/digest?page=1>>:
¹²¹ Տե՛ս <<https://www.e-draft.am/projects/246/digest>>: